



## **ԶԵԿՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ոլորտի գործունեության հակիրճ նկարագրություն,  
վերահսկողության ընթացիկ մեխանիզմների վերանայում և  
կարգավորման միջազգային լավագույն գործելակարգերի  
վերլուծություն**

Սույն ուսումնասիրության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու  
եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տեսակետներին:

## **Հապավումների ցանկ**

---

**ԱՄԸ-ՆԵՐ - Անվտանգության մասնավոր ընկերություններ**

**ՊՄԸ-ՆԵՐ – Պաշտպանության մասնավոր ընկերություններ**

**ՈՊՊԾ – Ոստիկանության պետական պահպանության ծառայություն**

**ԱՌՍ - Անվտանգության ոլորտի մարմին**

**ԽՊՕ-ՆԵՐ – Խիստ պաշտպանության օպերատորներ**

## **Բովանդակության ցանկ**

---

<b>Հապավումների ցանկ</b>	<b>2</b>
<b>Առաջին գլուխ</b>	
1. Նախաբան	4
<b>Երկրորդ գլուխ</b>	
2. Մեթոդոգիական հիմնադրույթներ	7
<b>Երրորդ գլուխ</b>	
3. Հայաստանում գործող ԱՄԸ-ների նկարագիրը	9
Ընդհանուր տեղեկություններ և ԱՄԸ-ների	
գործունեությունը	9
Անվտանգության արդի սպառնալիքները	11
Ուժի և հրազենի գործադրում, ինչպես նաև խուզարկության և	
ձերակալության լիազորություններ	12
ԱՄԸ-ների և այլ ոլորտների միջև եղած կապերը	14
Կարգավորում, վարչագիծ և վերահսկողություն	14
Պրոֆեսիոնալիզմ և վերապատրաստում	15
ԱՄԸ-ների գործունեության ապագա հեռանկարները	16
<b>Չորրորդ գլուխ</b>	
4. «Թիկնազորային գործունեության մասին» օրինագծի վերաբերյալ ԱՄԸ-ների դիտողությունները	17
<b>Քինգերորդ գլուխ</b>	
5. Կարգավորման մոդելներ՝ հիմնված միջազգային լավագույն գործելակարգերի վրա	19
<b>Վեցերորդ գլուխ</b>	
6. Եզրահանգում և առաջարկություններ	28
<b>Օգտագործված աղբյուրների ցանկ</b>	31

## 1. Նախաբան

Անվտանգության մասնավոր ընկերությունները (ԱՄԸ-ներ), որպես ոլորտ, կայացել են ամբողջ աշխարհում: Որոշ պետություններում՝ Ռուսաստան, ԱՄՆ, ՄԹ, Գերմանիա, Իսրայել, Հարավային Աֆրիկա և Ֆիլիպիններ, ազգային ԱՄԸ-ների աշխատակիցների թիվը և ԱՄԸ-ների բյուջեները գերազանցում են անվտանգության պետական ապարատինը<sup>1</sup>: Մինչ ԱՄԸ-ների գործունեությունը կարող է օգտակար լինել անվտանգության ապահովման համար, շատ հաճախ այդ գործունեության նկատմամբ բավարար հասարակական վերահսկողություն և հսկողություն չի իրականացվում: Սա հատկապես մտահոգիչ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնավոր պատվիրատուններին՝ նրանց տրամադրած վճարովի ծառայություններն ավանդաբար պետության իրավապահ մարմինների բացառիկ տիրույթում են եղել: Այս ծառայությունները ներառում են արագ արձագանքում արտակարգ իրավիճակներին, խիստ պաշտպանություն, բեռնափոխադրման և ստատիկ անվտանգության ծառայությունների՝ տրամադրում դեսպանատներին, միջազգային կազմակերպություններին, գործարարներին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Տնտեսական ազատականացումը՝ հատկապես Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում հանգեցրել է պետական հատվածի կրծատման և հասարակական անվտանգության հարցում պատասխանատվության փոխանցման ԱՄԸ-ներին: Ըստ որոշ տեսանկյունների՝ այս փոխանցման հիմնական առավելությունը պետության իրավապահ մարմինների աշխատաբերի կրծատումն է, ինչը թույլ է տալիս նրանց կենտրոնանալու իրենց առանցքային գործառույթների՝ հանցագործությունների կանխարգելման և իրավապահ գործունեության վրա<sup>2</sup>: Այս կրծատման թերությունը, սակայն, այն է, որ աստիճանաբար անվտանգության ծառայություններից կարող են օգտվել միայն այն անձինք, ովքեր կարող են դրանց համար վճարել, քանի որ ԱՄԸ-ներն առաջին հերթին առևտրային կազմակերպություններ են: Այն տեսանկյան կողմնակինները, որ պետությունը պետք է հավասարապես երաշխավորի իր բոլոր քաղաքացիների անվտանգությունը՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական դրությունից, պետք է, հետևաբար, իրազեկ լինեն պետական հատվածի կրծատման արդյունքում ի հայտ եկող ներքին անարդարության մասին:

Տարբեր պետություններում ԱՄԸ-ների ստանձնած դերը, նրանց գործունեության անբավարար կարգավորման հետ միասին, թույլ է տալիս եզրակացնելու, որ պետությունը զիջել է ուժի գործադրման իր մենաշնորհը: Հետևաբար, նպատակը պետք է լինի անվտանգության մասնավոր հատվածը ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ենթարկելը՝ կանխարգելելու վերջինիս լիազորությունների չարաշահումը և ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը:

Հայաստանում ԱՄԸ-ների գործունության հետ կապված որոշ ռիսկեր տեսությունից վերածվել են իրականության: Չնայած, համեմատած պետության իրավապահ մարմինների հետ՝ անվտանգության գրանցված մասնավոր հատվածը փոքրաչափ է աշխատակիցների և բյուջեի առունուվ, գոյություն չունի ԱՄԸ-ների վարչագծի և/կամ անբարեխնդության իրավական կարգավորում կամ արդյունավետ վերահսկողություն:

Վերջին տարիներին եղել մարդու իրավունքների և Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գործող օրենքների խախտումներ, որոնք վերագրվում են

<sup>1</sup> Հրաձգային և փոքր տրամաշալի գեներերի հսկողության Հարավ-Արևելյան Եվրոպայի կենտրոն (SEESAC), (2005 թ օգոստոս), «ՐՓԾ-ները և անվտանգության մասնավոր ընկերությունները Հարավ-Արևելյան Եվրոպայում. Անվտանգության բացակայության պատճառներ թե՝ հետևանքներ», [http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW\\_and\\_PSCs.pdf](http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW_and_PSCs.pdf), էջ 1:

<sup>2</sup> Նույնը, էջ 2:

ինչպես ԱՄԸ-ներին, այնպես էլ՝ մասնավոր կարգով վարձված թիկնապահներին<sup>3</sup>: Այս ոլորտի հետ կապված ներքին ռիսկերն արդեն ճանաչվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից, որը երկու օրինագիծ է նախապատրաստել մասնավոր թիկնագորային գործունեության մասին 2007 թև և 2009 թ:

Դետևաբար, այս գեկույցի նպատակն է մշակել Հայաստանում գործող ԱՄԸ-ների վերաբերյալ համապարփակ մի ուսումնասիրություն, որը կարող է որպես նախնական ուղեցույց կիրառվել պատասխանատու մարմնի՝ ՀՀ ԱԺ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից՝ պետությունում ԱՄԸ-ների գործունեությունը կարգավորող օրենքի ընդունման նպատակով առավել մանրակրկիտ մի հետազոտություն իրագործելու համար:

Կարևոր է ի սկզբանե նշել, որ այս ուսումնասիրությունն առաջինն է Հայաստանում իր տեսակի մեջ, և որ դրա շեշտադրումը, հետևաբար, այնպիսի հարցերին պատասխանելու է, ինչպիսիք են.

- Որո՞նք են գործնականում ԱՄԸ-ների դերերը և խնդիրները:
- Ի՞նչ վերահսկողության մեխանիզմներ գոյություն ունեն:
- Որո՞նք են աշխատանքի ընդունման պահանջները:
- Ինչպիսի՞ գենքից կարող են իրավաչափորեն օգտվել ԱՄԸ-ները:
- Ի՞նչ վերապատրաստում են նրանք ստանում:
- Արդյո՞ք նրանք ունեն խուզարկության և առգրավման լիազորություններ:
- Կան արդյո՞ք կապեր ԱՄԸ-ների, անվտանգության պետական ապարատի և/կամ կազմակերպված հանցավորության միջև:
- Արդյո՞ք ներկայիս օրինագիծը պատշաճ կերպով է արտացոլում ողջ ոլորտի կարիքներն ու առանձնահատկությունները:
- Ի՞նչ կարգավորման հիմքեր են գործում միջազգային ասպարեզում:
- Արդյո՞ք դրանց հատկանիշներից մի քանիսի/բռնորդի որդեգործմը և կիրառումը իրագործելի է Հայաստանի համատեքստում:

Մինչ պետության անվտանգության մասնավոր հատվածի վերլուծությանն անցնելը, անհրաժեշտ է սահմանել Անվտանգության մասնավոր ընկերություն եղորդ: Այս թեմայի շորջ նախկինում կատարված գիտական հետազոտությունները բաժանում են անվտանգության ոլորտի ոչ պետական դերակատարներին երկու դասի՝ պաշտպանության մասնավոր և անվտանգության մասնավոր ընկերություններ: Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել երկու եզրերի ամենատարբեր սահմանումներ, սակայն այս հետազոտության համար քավարար են հետևյալ տարրերակումները: ՊՍԸ-ներին կարելի է նկարագրել որպես «ընկերություններ, որոնք մասնագիտացված ծառայություններ են առաջարկում՝ կապված պատերազմների և հակամարտությունների հետ՝ ներառյալ մարտական գործողությունները, ռազմավարական պլանավորումը, հետախուզական տվյալների հավաքումը, ընթացիկ և նյութատեխնիկական օժանդակությունը, վերապատրաստումը, գնումները և տեխսապասարկումը»<sup>4</sup>: ԱՄԸ-ներին, ընդգծելով

<sup>3</sup> Տես Սմբատյան, Հասմիկ (13-ը մարտի, 2009 թ), «Հայ ֆոտոլրագրողը դաժանաբար ծեծի է ենթարկվել ԲՈՒՀ-ում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ», [http://www.rferl.org/content/Armenian\\_Photojournalist Severely Beaten In University Dispute/1509708.html](http://www.rferl.org/content/Armenian_Photojournalist Severely Beaten In University Dispute/1509708.html) (կայքի վերջին մուտքը՝ 20/05/2009) ԵՎ

Now Public, (24-ը օգոստոսի, 2007 թ), «Թիկնապահները ծեծկոտուր են սարքում երևանում», <http://www.nowpublic.com/bodyguards-fight-yerevan>. (կայքի վերջին մուտքը՝ 20/05/2009) ԵՎ

Յովհաննիսյան Իրինա, (22-ը ապրիլի, 2009 թ), «Հայ պատգամավորների թիկնապահները ծերբակալվել են ճանապարհատրանսպորտային կանոնները խախտելու համար», <http://www.armenialiberty.org/content/article/1613921.html> (կայքի վերջին մուտքը՝ 26/05/2009)

<sup>4</sup> Բուզատու, Ան-Մարի (30-ը սեպտեմբերի, 2008 թ), «ՊԱՄԸ-ների կարգավորման Եվրոպական գործելակարգեր և միջազգային իրավական փաստաթղթերի միջոցով ՊԱՄԸ-ների կարգավորման մասին առաջարկություններ», Զինված ուժերի ժողովորակական վերահսկողության ժմկի կենտրոն (DCAF), [http://www.unwg.rapn.ru/en/analytics/Expert\\_Paper - Buzatu\\_Regulatory\\_Approaches\\_to PMSC2.pdf](http://www.unwg.rapn.ru/en/analytics/Expert_Paper - Buzatu_Regulatory_Approaches_to PMSC2.pdf), (կայքի վերջին մուտքը՝ 8/09/2009) Էջ 10:

Անան ընկերությունների ոստիկանական գործառույթները, կարելի է բնորոշել որպես առևտրային կազմակերպություններ, որոնք շահույթ ստանալու նպատակով ըստ էռության ոստիկանական բնույթի անվտանգության ծառայություններ են մատուցում մասնավոր և կառավարական պատվիրատուններին:

Հայաստանում գոյություն չունեն Պաշտպանության մասնավոր ընկերություններ (ՊՍԸ-ներ): Յետևաբար, այս գեկույցը բացառապես կենտրոնանում է գրանցված ԱՍԸ-ների վրա: Այս պետություննում գործում են բազմաթիվ ԱՍԸ-ներ, որոնք տրամադրում են ֆիզիկական կամ տեխնիկական պաշտպանություն, կամ էլեկտրոս միասին: Մարդու կողմից կառավարվող ստատիկ և պարեկապահակային անվտանգության, արագ արձականքան, խիստ պաշտպանության և բեռնափոխադրման անվտանգության ուղեկցման ծառայությունները դասակարգվում են որպես ֆիզիկական պաշտպանության ծառայություններ, մինչդեռ տեխնիկական պաշտպանությունը ներառում է անվտանգության սարքակազմի (hardware) և ծրագրակազմի (software), օրինակ՝ տեսախցիկների կամ էլեկտրոնային ազդանշանային համակարգերի տեղադրություն: Անվտանգության՝ մարդու կողմից կառավարվող ֆիզիկական բաղադրիչը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այս ուսումնասիրության շրջանակներում, և դրան անդրադարձ կկատարվի բացառիկ կարգով:

Այս գեկույցը բաժանված է վեց գլխի և ունի հետևյալ կառուցվածքը: Մինչ հաջորդ գլուխը մանրանասնում է հետազոտության մեթոդոգիան, երրորդ գլուխը տեղեկություններ է պարունակում Հայաստանում գործող ԱՍԸ-ների վերաբերյալ: Չորրորդ և հինգերորդ գլուխները կազմում են այս ուսումնասիրության իրավական մասը: Չորրորդը քննադատաբար վերանայում է «Թիկնազորային գործունեության մասին» օրինագծի վերաբերյալ՝ ԱՍԸ-ների կողմից ներկայացված դիտողությունները, իսկ հինգերորդը վերլուծում է միջազգային մակարդակում առկա կարգավորման հիմնական շրջանակների առավելություններն ու թերությունները: Զեկույցն ավարտվում է խորհրդարանական հանձնաժողովին, ԱՍԸ-ներին և ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակին ուղղված առաջարկությունների ցանկով, որոնց հետևելու դեպքում հնարավոր կլինի բարելավել Հայաստանում անվտանգության մասնավոր ոլորտի ժողովրդավարական վերահսկողության մակարդակը:

## **2. Մեթոդոգիական հիմնադրույթներ**

Հայաստանի անվտանգության մասնավոր հատվածի կարգավորման բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում այս հատվածի արդյունավետ պետական վերահսկողության համար: Յետևաբար, ՀՀ Աժ-ի Պաշտպանության, ազգային

անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին անհրաժեշտ տվյալների և վերլուծության տրամադրումն առաջընթացի հիմնավոր և կարևոր քայլերից է: Այս նպատակով տեղեկություններ են հավաքվել պետությունում գործող ԱՄԸ-ների վերաբերյալ, վերանայվել են «Թիկնազորային գործունեության մասին» օրինագծի հետ կապված իրավական խնդիրները և իրականացվել է կարգավորման մոդելների քննադատական վերլուծություն: Վերջում հանձնաժողովին ներկայացվում են առաջարկություններ, որոնք կարող են նախնական ուղենիշ հանդիսանալ ներպետական մակարդակում ճիշտ կարգավորման համակարգի ստեղծման համար:

## Հետազոտության մեթոդոլոգիան

Պետությունում գործող անվտանգության մասնավոր հատվածի մասին տեղեկությունները հավաքվել են ֆիզիկական անվտանգության ծառայություններ մատուցող գրանցված տասը ԱՄԸ-ներից ութին և ՀՀ Ոստիկանության պետական պահպանության ծառայության բարձրաստիճան պաշտոնատար անձին տրամադրած հարցաշարի պատասխանների վերլուծության արդյունքում: Հարցաշարն ընդհանուր հարցեր էր պարունակում հայաստանյան ԱՄԸ-ների դերերի և խնդիրների, հրագենի գործադրման, աշխատանքի ընդունման և վերապատրաստման պահանջների, խուզարկության և առգրավման լիազորությունների, վերահսկողության մեխանիզմների, ինչպես նաև այլ ոլորտների (օրինակ՝ անվտանգության պետական ծառայությունների, քաղաքական կուսակցությունների, կազմակերպված հանցավորության) հետ կապերի մասին:

Հայաստանի գործարար տեղեկատում ([www.spyur.am](http://www.spyur.am)) պարունակում է այս ոլորտում գրանցված բոլոր ԱՄԸ-ների կոնտակտային տվյալները: Հետազոտության հարցումը նախապատրաստելիս հաշվի է առնել SEESAC կազմակերպության 2005 թ գեկույցը՝ վերնագրված «ՂՓՏԶ-ները և անվտանգության մասնավոր ընկերությունները Հարավ-Արևելյան Եվրոպայում». Անվտանգության բացակայության պատճառներ թե՝ հետևանքներ», և, համապատասխան փոփոխություններից հետո, օգտագործվել է վերջինիս հարցաշարը: Անց են կացվել լրացուցիչ հարցազրույցներ և/կամ լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերման նպատակով ուղարկվել են հարցումներ ԱՄԸ-ներին, եթե տարածված հարցաշարի պատասխանները պարզաբանման կարիք են ունեցել: Ուսումնասիրվել են նաև ԱՄԸ-ների կայքերը, եթե եղել են այդպիսիք՝ լրացուցիչ նյութեր ձեռք բերելու նպատակով:

«Թիկնազորային ործունեության մասին» ՀՀ օրինածի քննադատական վերանայումը հիմնված է երեք ԱՄԸ-ների կողմից ներկայացված գրավոր դիտողությունների համեմատական վերլուծության վրա: Լրամշակված օրինագծի պատճենները, հետազոտության հարցաշարի հետ միասին, տրամադրվել են ԱՄԸ-ներին: Հարցազրույցներին մասնակցած բոլոր ԱՄԸ-ները դժգոհ են օրինագծի որոշ մասերի բովանդակությունից և ձևակերպումներից: Հետևաբար, նրանց դիտողությունների համեմատությունը օրինագծի վերջին տարբերակի հետ հիմնավոր կերպով վեր է հանում դրա հնարավոր թերությունները:

Քննադատաբար վերլուծվել են միջազգայնորեն կիրառվող կարգավորման այնպիսի մոդելներ, ինչպիսիք են ինքնակարգավորումը և հիբրիդային կարգավորումը (այլ կերպ ասած՝ կառավարություն-մասնավոր ոլորտ համատեղ կարգավորումը՝ բացահայտելու, թե որ մեխանիզմն է առավել արդյունավետ ԱՄԸ-ների վերահսկողության ապահովման տեսանկյունից: Այս մոդելներից և ոչ մեկն առանձին վերցված կատարյալ չեն: Միայն դրանց համադրությունը կարող է օգնել անվտանգության մասնավոր հատվածի հետևողական կարգավորմանը: Հետազոտության բացահայտումները հիմնված են համապատասխան գիտական ամսագրերում՝ թրեական քաղաքականության և հետազոտությունների եվրոպական համես, թրեապարանության եվրոպական համես, հրատարակած հոդվածների,

ինչպես նաև Եվրախորհրդի Քրեական խնդիրների Եվրոպական կոմիտեի, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության կենտրոնի, Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի և անվտանգության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ աշխատող ՀԿ-ների գեկույցների վրա: Ի լրումն սրանց՝ ուսումնասիրվել է նաև Բրիտանիայի Անվտանգության ոլորտի մարմնի կայքը: Քանի որ ԱՄԸ-ների կարգավորման վերաբերյալ տեղեկություններն ավելի քիչ են՝ համեմատած ՊՄԸ-ների հետ, Վերջինիս, ինչպես նաև այլ ոլորտների վերահսկողությանը վերաբերող գաղափարները նույնպես, անհրաժեշտության դեպքում, կիրառվել են այս ուսումնասիրության մեջ:

## Ուսումնասիրության թերությունները

Հետազոտության այս նախագծի սահմանափակումները կապված են հարցման ընտրանքի հետ: Հետազոտության հարցաշարին պատասխանելու և օրինագծի գնահատում տրամադրելու համար դիմած ութ ԱՄԸ-ներից ուրին էլ պատասխանել են հարցաշարին, սակայն դրանցից միայն երեքն են կատարել գնահատումը: Հարցաշարի պատասխանների որակը նույնպես տարբեր է եղել բովանդակության և մանրամասների առումով, ինչը դարձյալ նվազեցրել է կիրառելի պատասխանների թիվը երեքի: Սա կարելի է բացատրել հիմնականում փոքր ԱՄԸ-ների կողմից իրենց գործառնություններին և ոլորտին ընդհանրապես վերաբերող տեղեկությունները կիսելու դժկամությամբ՝ անկախ այն հանգամանքից, որ հետազոտության թիմը բազմից երաշխավորել է, որ հաղորդած բոլոր տեղեկությունները կիրապարակվեն առանց հղումների:

Հետևաբար, Հայաստանում ԱՄԸ-ների նկարագրի մասում արտացոլված տեղեկությունների գգալի մասը հիմնված է երեք ընկերությունների կողմից տրամադրված տվյալների վրա: Այլ արժեքավոր մանրամասներ կարող են չբացահայտված մնալ կիրառելի պատասխանների փոքրաթվության պատճառով: Այդուհանդեռձ, ձեռքբերված տեղեկությունները կարող են ծառայել որպես լավ ցուցիչներ երևանում և նարգերում այս ոլորտում գրանցված ընկերությունների դրության մասին: Պատճառները հեկայլն են. ա/ խնդրո առարկա երեք ԱՄԸ-ները ոլորտի առաջատարներն են իրենց ռեսուրսների, պատվիրատունների և անձնակազմի առումով, բ/ հարցագրույցին մասնակցած Հայաստանում ֆիզիկական անվտանգության ծառայություններ մատուցող տասը ընկերություններից ութը հաստատել են, որ միայն իրենք են ծառայություններ մատուցում պատվիրատուններին մայրաքաղաքում և մարզերում: Այստեղ պետք է նշել, որ հարցագրույցին մասնակցած բոլոր ընկերությունները հաղորդել են Հայաստանում իրականացվող չգրանցված ԱՄԸ-ների գործունեության մասին: Այս խնդիրը, լինելով կարևոր ապագա ուսումնասիրությունների համար, պետք է մնա այս ուսումնասիրության շրջանակից դուրս, քանի որ վերջինս բացառապես կենտրոնանում է արդեն իսկ գրանցված ընկերությունների կարգավորման վրա:

## 3. Հայաստանում գործող ԱՄԸ-ների նկարագիրը

### Անվտանգության մասնավոր ուժեր՝ 1242\*

\* Ստացված թիվը ներառում է ֆիզիկական պաշտպանություն առաջարկող տասը ԱՄԸ-ներից միայն վեցի աշխատակիցներին: Մնացած չորս ընկերությունները մերժել են ներկայացնել իրենց աշխատակիցների թիվը կամ նրանց հետ հնարավոր չի եղել կապվել: **NB.** հարցագրույցին մասնակցած բոլոր ԱՄԸ-ները հաստատել են, որ պետությունում գործում են բազմաթիվ չգրանցված ԱՄԸ-ներ, ինչպես նաև ձեռնարկություններ, որոնք պահպան են ներքին անվտանգության աշխատակիցների, որոնք դրև առնչություն չունեն պաշտոնապես գրանցված

Գրանցված ԱՄԸ-ների ընդհանուր թիվը (2009 թ)` 18\*\*

### 3.1. Ընդհանուր տեղեկություններ և ԱՄԸ-ների գործունեությունը

Առաջին երկու ԱՄԸ-ները Հայաստանում հիմնադրվել են 1992 թ ԱՄՆ-ի դեսպանատանը և ԱՄՆ-ի Խաղաղության կորպուսի գրասենյակին անվտանգության ստատիկ ծառայություններ տրամադրելու նպատակով: ԱՄԸ-ների պաշտոնական գրանցումն սկսվել է 1995 թ, երբ անվտանգության տեղական մասնավոր հատվածում տարածվեց ընդարձակման առաջին ալիքը: Սկզբնական շրջանում անվտանգության տեղական մասնավոր ընկերությունների հիմնական պատվիրատունները դիվանագիտական առաքելություններն ու միջազգային կազմակերպություններն էին: Սակայն, 2000 թ ի վեր Հայաստանի առավել բարենպաստ տնտեսական վիճակը և գործարար կյանքի աշխուժացումը հանգեցրեցին ԱՄԸ-ների հատվածի հետագա ընդարձակմանը, քանի որ բազում պատվիրատունների շրջանում ձևավորվել էր պաշտպանության առավել լայն սպեկտրի պահանջարկ: Այսօր այս պատվիրատունները ներառում են խոշոր ազգային և միջազգային ձեռնարկություններ՝ «Ararat Gold Recovery», «France Telecom Group – Orange», «Yerevan Brandy Company – Pernod Richard», «Armentel – Beeline», «Viva Cell», «Pro Credit» բանկը, «Armenian Molybdenum Production» և «Armenia Marriott» հյուրանոցը, եթե նշելու լինենք դրանցից մի քանիսը: Առավել փոքր տնտեսվարող սուբյեկտները, ինչպիսիք են սուպերմարքեթներն ու գիշերային ակումբները, նույնական վարձում են ԱՄԸ-ների: Բացի այդ, մի շարք պետական հաստատություններ՝ սկսած դպրոցներից և համալսարաններից, վերջացրած երևանի քաղաքապետարանով, կանոնավոր հիմունքներով հատուկ միջոցառումների ընթացքում օգտվում են ԱՄԸ-ների պաշտպանությունից:

Վերջին տարիների ընթացքում ոլորտն այսպիսով համապատասխանեցրել է իր ծառայությունների սպեկտրը նոր պատվիրատունների պահանջներին՝ ներառելով մարդու կողմից կառավարվող ստատիկ և պարեկապահակային անվտանգության, արագ արձագանքման, խիստ պաշտպանության ծառայություններ (թիկնապահներ), բեռնափոխադրումների անվտանգ ուղեկցում, պարտքի վերադարձ, խուզարկության, ինչպես նաև տեխնիկական պաշտպանության՝ անվտանգության սարքակազմի և ծրագրակազմի (էլեկտրոնային հակոդության և ազդանշանային համակարգեր) տեղադրման ծառայություններ: Հարցազրույցներին մասնակցած ութ ԱՄԸ-ներից չորսը նշել են, որ իրենց պատվիրատունների ցանցը ծավալվում է ողջ Հայաստանով մեկ, մինչդեռ մյուս կեսը նշել են, որ կենտրոնանում են բացառապես երևանի վրա: Բոլոր ընկերությունների սեփականատերերը պետության քաղաքացիներ են, սակայն երեք ԱՄԸ-ներ նշել են, որ տեխնիկական և վերապատրաստման ոլորտում համագործակցության համաձայնագրեր ունեն Բուլղարիայում, Կանադայում, Ռուսաստանում և Մթ-ում գործող ԱՄԸ-ների հետ:

Հայաստանում անվտանգության մասնավոր հատվածի ընդարձակումը վերագրվում է ԱՄԸ-ների կողմից իրենց ծառայությունների համար առաջարկվող մրցակցային գներին, որոնք հաճախ առավել ցածր են, քան Ոստիկանության պետական պահպանության ծառայության (ՈՊՊՕ) գները: Ի լրումն սրա՝ ԱՄԸ-ները նշել են, որ մասնավոր պատվիրատունները նախընտրում են վարձել իրենց, այլ ոչ թե ոստիկանությանը՝ գործարար գաղտնիքները պահպանելու նպատակով, ինչպես նաև

ԱՄԸ-ների հետ: Հայաստանում անվտանգության մասնավոր հատվածի աշխատակիցների թվի հստակ հաշվարկներ կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել այս ստվերային հատվածը:

\*\* 18 ընկերություններից 10-ը տրամադրում են հիմնականում մարդու կողմից կառավարվող անվտանգություն (օրինակ՝ ստատիկ, պարեկապահակային և խիստ պաշտպանության ծառայություններ), իսկ 8-ը տրամադրում են բացառապես տեխնիկական անվտանգության ծառայություններ: Այս ուսումնասիրությունն կենտրոնանում է անվտանգության՝ մարդու կողմից կառավարվող ծառայություններ՝ տրամադրող 10 ԱՄԸ-ների վրա:

այն պատճառով, որ ԱՄԸ-ների ապահոված պաշտպանության մակարդակը պատվիրատուների կողմից ավելի բարձր է գնահատվում, քան ոստիկանությանը: Այս պնդմանը կտրականապես դեմ էր ՈՊՊԾ-ի՝ հարցազրույցին մասնակցած ներկայացուցիչը, որն իր հերթին քննադատեց պետության տարածքում գործող ԱՄԸ-ներին ցածրորակ ծառայություններ տրամադրելու, ինչպես նաև պետությունում հանցավորության մակարդակի վրա ունեցած ազդեցության համար: Նա ընդունեց, այդուհանդերձ, որ ԱՄԸ-ները որոշակի առավելություններ ունեն, քանի որ առավել ազատ են պատվիրատուների հետ գների շուրջ բանակցելու հարցում, ինչի շնորհիվ նրանց հետ հաճախ են պայմանագրեր կնքում:

Այն փաստը, որ ԱՄԸ-ներն ապահովում են դպրոցների, պետական ԲՈՒՀ-երի և Երևանի քաղաքապետարանի անվտանգությունը, որոնք ավանդաբար գտնվել են պետության ոստիկանության իրավասության ներքո, մտահոգություններ է առաջացնում՝ կապված ոստիկանության և անվտանգության մասնավոր հատվածի միջև պայմանագրերի հարցում գոյություն ունեցող հնարավոր նրակցության հետ: ՈՊՊԾ-ի ներկայացուցիչը, սակայն, հերքել է այս մտահոգությունը: Այդուհանդերձ, ԱՄԸ-ների ներկայիս չկանոնակարգված ոտնձգությունները ոստիկանության տիրույթ ի չիք են դարձնում երկուսի համագործակցությունը, ինչը հղի է այն ռիսկով, որ «ԱՄԸ-ներն աստիճանաբար կդիտեն որպես էժան ոստիկանություն, ինչի հետևանքով առավել երկարատև ժամկետում կվերանան անվտանգության պետական ծառայությունները»<sup>5</sup>:

---

<sup>5</sup> Դրաձգային և փոքր տրամաչափի գենքերի հսկողության Հարավ-Արևելյան Եվրոպայի կենտրոն (SEESAC), (2005 թ օգոստոս), «ՐՓԾԶ-ները և անվտանգության մասնավոր ընկերությունները Հարավ-Արևելյան Եվրոպայում. Անվտանգության բացակայության պատճառներ թե՛ հետևանքներ», [http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW\\_and\\_PSCs.pdf](http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW_and_PSCs.pdf), (կայքի վերջին մուտքը՝ 10/07/2009) էջ ii:

### 3.2 Անվտանգության արդի սպառնալիքները

1-ին աղյուսակ. հանցագործությունների մասին վիճակագրական տվյալներ, 2006 – 2009 թթ

	Գրանց-ված հանցագործությունների ընդհանուր թիվը	Մարդու դեմ ուղղված հանցագործություններ	Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	Մարդու դեմ ուղղված հանցագործություններ			Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	
				Սպառնություն	Դիտավորությամբ մարմնական վնասվածքներ պատճառելը	Բռնաբարություն և բռնաբարության փորձ	Պետական ունեցվածքի հափշտակություն	Մասնավոր ունեցվածքի գողություն
2006 թիվը	7529	837	3104	54	467	8	258	2654
2007 թիվը	6510	711	2805	51	384	5	248	2373
2008 թիվը	3998	498	1710	40	247	9	120	1478
2009 թիվը	6849	1351	2921	34	612	10	169	2621

Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը վերջին չորս տարիների ընթացքում զգալիորեն տատանվում է՝ համաձայն ՀՀ Ոստիկանության կողմից հրապարակված պաշտոնական վիճակագրության: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների՝ հատկապես գողության թիվն ավելի բարձր է, քան մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը: Ուսումնասիրության կատարման ընթացքում անկում է ապրել սպանությունների՝ որպես մարդու դեմ ուղղված լրջագույն հանցագործությունների թիվը: Ինչպես պետական, այնպես էլ նաև աստիճանաբար ավելի ու ավելի շատ պատվիրատունների ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պետական կազմակերպություններից, օգտվում ԱՄԸ-ների ծառայություններից:

## **Ուժի և հրազենի գործադրում, ինչպես նաև խուզարկության և ձերբակալության լիազորություններ**

Ըստ հարցազրույցին մասնակցած ՈՊՊԾ-ի ներկայացուցչի՝ Հայաստանում ԱՄԸ-ներին միայն թույլատրվում է որպես սեփականություն ունենալ և օգտագործել քաղաքացիական գենք՝ համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի: Սրանք հանգում են այնպիսի գինատեսակների, ինչպիսիք են գազային ատրճանակները, օդածնչիք գենքը, էլեկտրահարող սարքերը և մահակները: Գազային ատրճանակները պետք է գրանցված լինեն գենքը կրող պահապանի, այլ ոչ թե նրան վարձած ընկերության անունով, նույնիսկ եթե գենքը հանդիսանում է այդ ընկերության սեփականությունը: Կանոնն այն է, որ մի միավոր ժամանակամիջոցում մի գազային ատրճանակը կարող է գրանցված լինել միայն մի պահապանի անունով: Այս իրավիճակն անհարմար է ընկերությունների համար, քանի որ նրանք ստիպված են ապահովելու այն պահապանների նախասահմանված և սահմանափակ քվին, որոնց թույլ է տրվում կրել գազային ատրճանակներ: Բացի այդ, նույնիսկ երբ ատրճանակների սեփականատերերը ԱՄԸ-ներն են, նրանք ժամանակավորապես գրկվում են դրանց սեփականությունից քանի դեռ ատրճանակը գրանցված է առանձին պահապանի անունով: Արդյունքում՝ ԱՄԸ-ներից մեկը նշել է, որ եթե գազային ատրճանակին կցված պահապանը որոշում է աշխատանքից ազատվել, նրա վերջին աշխատավարձը պահում են այնքան ժամանակ քանի դեռ գազային ատրճանակը չի վերադարձվել ընկերությանը: Նման ընթացակարգերը բարդացնում են ԱՄԸ-ների բնականոն գործունեությունը:

ԱՄԸ-ները գեկուցել են, որ հերթափոխի դեկավարմերն անց են կացնում պահապաններին հանձնած ողջ գենքի գրանցում: Զենքը պահվում է ընկերության տարածքում, կնքված տեղանքում:

Քանի որ ԱՄԸ-ներին արգելված է կրել մահաբեր գենք, այն պատվիրատունները, ովքեր ցանկանում են վարձել խիստ պաշտպանության ծառայող մահաբեր գենքի թույլտվությամբ, պետք է դիմեն ՈՊՊԾ-ի ծառայողի: ՈՊՊԾ-ի՝ հարցազրույցին մասնակցած ներկայացուցիչն արդարացրեց այս կանոնը՝ վիճարկելով, որ միայն ոստիկանության ծառայողներն են ստանում պատշաճ վերապատրաստում (ներկայումս եռամսյա տևողությամբ) նման գենքի հետ վարվել կարողանալու համար: ԱՄԸ-ներից մեկը, սակայն, պնդեց, որ անձնական պաշտպանության կարիք և լավ կապեր ունեցող անձանց շրջանում տարածված գործելակարգ է, երբ նրանք իրենց նտերիմներին ընդունում են ՈՊՊԾ՝ նրանց համար ապահովելու մահաբեր գենք կրելու համար անհրաժեշտ գրանցումը: Հարցազրույցին մասնակցած ՈՊՊԾ-ի ներկայացուցիչը ժիստել է այս գործելակարգի կիրառումը: Այդուհանդեռձ, armenialiberty.org-ում տպագրված մի հոդվածում հղում էր արվում ՀՀ Ոստիկանության պետի նախկին տեղակալ Արարատ Մահտեսյանի հետևյալ խոսքերին: «Եթե գործարարն իր շրջապատում ունի այնպիսի մարդիկ, որոնց նա շատ է վստահում, ոստիկանությունը կարող է քննության առնել նրանց աշխատանքի ընդունան հարցը» և «Եթե նրանք համապատասխանեն մեր պահանջներին, մենք նրանց կարող ենք ընդունել ոստիկանության շարքերը, որպեսզի նրանք կարողանան իրենց պարտականությունները կատարել ոստիկանի ուսադիրներով»<sup>6</sup>: Եթե նման գործընթաց իրոք առկա է,

<sup>6</sup> Բերլին, Աստողիկ (24-ը փետրվարի, 2006 թ), «Կառավարությունն ընդունեմ մասնավոր թիկնապահների օրինականացման», Armtown, <http://www.armtown.com/news/en/rfe/20060224/200602242/>. (Վերջին անգամ կայք մուտք է գործվել 26/5/2009):

մտահոգություններ են առաջանում, թե արդյոք հիշյալ համակիրը, որը ՈՊՊԾ ընդունվելու դեպքում կդիտվի որպես լիարժեքորեն որակավորված ոստիկանության ծառայող, ստացել է պատշաճ մասնագիտական և էթիկական վերապատրաստում, որպեսզի լիարժեքորեն որակավորվի որպես ոստիկանության կանոնավոր ծառայող: Պետք է հիշել, որ պետության ոստիկանության ծառայողը սպասարկում է լայն հանրությանը և, հետևաբար, ծառայության մեջ գտնվելու ընթացքում օգտվում է որոշակի իրավունքներից և արտոնություններից, որոնք օգնում են նրան արդյունավետորեն պահպանել օրենքը: ՈՊՊԾ ընդունված՝ գործարարի մտերիմ մարդը երբեք չի սպասարկի հանրությանը, այլ՝ միայն մի մարդու: Հետևաբար, պետք է մանրազնին կերպով վերանայել այն գործընթացը, որով միևնույն արտոնություններն են շնորհվուն հիշյալ մարդուն և ոստիկանության կանոնավոր ծառայողին՝ պարզելու, թե արդյոք նման գործելակարգը հանապատասխանում է Հայաստանի օրենքներին:

Հարցազրույցներին մասնակցած ԱՄԸ-ները նշել են, որ իրենք իրենց աշխատակիցներին ուսուցանում են ուժ գործադրել միայն այն դեպքում, եթե սպառված են մնացած բոլոր միջոցները, և որ նրանցից պահաջվում է առաջին օգնության սարքավորումներ ունենալ բոլոր ծառայողական վայրերում: Այդուհանդերձ, ըստ ԱՄԸ-ներից մեկի՝ միշտ չէ, որ հնարավոր է առաջին օգնության վերապատրաստում տրամադրել ողջ անձնակազմին:

Քաղաքացիներին խուզարկելու և ձերբակալելու իրավունքների մասին գիտելիքները տարբեր են այս ոլորտում: ԱՄԸ-ները պնդում են, որ պահապաններին թույլատրվում է խուզարկել անհատներին պատվիրատուի տարածքում, եթե պատվիրատուն բացահայտ և գրավոր կերպով լիազորում է այս հարցն ԱՄԸ-ին, ինչպես նաև իր սեփական գործառուներին: Ինչ վերաբերում է պահապանի՝ ձերբակալելու լիազորություններին, որոշ ԱՄԸ-ներ վիճարկում են, որ իրենց աշխատակիցները որևէ մեկին ձերբակալելու իրավունք որպես այդպիսին չունեն, մինչդեռ այլ ԱՄԸ-ներ պնդում են, որ պահապանները կարող են ժամանակավորապես ձերբակալել անձին պատվիրատուի տարածքում՝ պայմանով, որ մինչ այդ անելը զանգահարել են ԱՄԸ-ի տնօրեննին և ոստիկանություն:

ԱՄԸ-ների աշխատակիցների կողմից ուժի գործադրումը կարող է լուրջ ֆիզիկական և/կամ հոգեկան վնաս պատճառել ինչպես տուժածներին, այնպես էլ նեղաբերներին: Իրավիճակն էլ ավելի է վատթարանում այն փաստի պատճառով, որ ԱՄԸ-ները մեծ մասմբ չեն ապահովագրում իրենց աշխատակիցներին: Պատճառները կաված են մի կողմից շուկայական ճնշումների հետ, ինչպիսիք են զգալի մրցակցությունն այն պատվիրատուների համար, ովքեր պահանջում են լավագույն ծառայությունները նվազագույն գումարի դիմաց և, մյուս կողմից, Հայաստանում ողջամիտ գնային քաղաքականության բացակայությանը: Այն ԱՄԸ-ներին, որոնք նախկինում ապահովագրություն են նախատեսել իրենց աշխատակիցների համար մրցութային առաջարկներում, պատվիրատուներն առաջարկել են հանել այդ կետը՝ նվազեցնելու պայմանագրերի ընդհանուր ծախսերը:

## ԱՄԸ-ների և այլ ոլորտների միջև առկա կապերը

Հարցազրույցներին մասնակցած բոլոր ԱՄԸ-ները և ՈՊՊԾ-ի ներկայացուցիչը կտրականապես ժխտել են անվտանգության մասնավոր հատկածի և անվտանգության պետական ապարատի միջև որևէ կապերի

առկայության փաստը: Մինչ սա կարող է ճշմարիտ լինել պաշտոնական մակարդակում, շատ հավանական է ոչ պաշտոնական կապերի և շփումների գոյությունը այն պատճառով, որ ԱՍԸ-ների բոլոր աշխատակիցները պետք է ծառայած լինեն զինված ուժերում, իսկ ներկայիս աշխատակիցներից շատերը՝ ներառյալ դեկավար մակարդակում, ունեն ոստիկանական կամ անվտանգության ծառայության փորձառություն:

### 3.5 Կարգավորում, վարքագիծ և վերահսկողություն

Հայաստանում անվտանգության մասնավոր հատվածն ընդհանրապես կարգավորված չէ: Գործունեություն ծավալել կարողանալու համար ԱՍԸ-ները պետք է գրանցվեն **Պետրեգիստրում**: Սակայն գրանցման գործընթացը նույնն է, ինչ և Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (**ՍՊԸ-ներ**) համար և հաշվի չի առնում հասարակական անվտանգության այն հավանական ռիսկերը, որոնք կապված են ԱՍԸ-ների հետ: Ներկայումս, **ցանկացած** անձ օրենքով իրավունք ունի Հայաստանում հիմնելու ԱՍԸ՝ անկախ այն բանից, թե արդյոք ունի նման ընկերություն դեկավարելու համար անհրաժեշտ որակավորում:

Ըստ ՀՀ Ոստիկանության՝ ՀՀ Արդարադատության նախարարությունն իրավունք ունի ստուգելու, թե արդյոք ԱՍԸ-ները պատշաճորեն գրանցված են: Այդուհանդերձ, անօրինական վարքագիծ դեպքում նախարարությունը չի կարող պահանջել, որ ընկերությունները դադարեցնեն իրենց գործունեությունը, քանի որ անվտանգության մասնավոր հատվածը կարգավորող հատուկ օրենսդրություն չկա: Ներկայումս ԱՍԸ-ների գործունեությունը կարգավորող օրենքներն ընդունվել են անվտանգության մասնավոր հատվածի գործունեության հետ ընդհանրապես որևէ կապ չունեցող պատճառներով և ներառում են.

- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (2001 թ մայիս),
- ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը (2006 թ հունվար),
- «Զենքի մասին» ՀՀ օրենքը (2008 թ հուլիս):

Ներկայիս կարգավորման միակ այլընտրանքային աղբյուրը ԱՍԸ-ների կողմից ինքնակարգավորումն է: Հարցազրույցներին մասնակցած բոլոր ընկերությունները պնդում են, որ ունեն հաստատված վարքագիծ ներքին կանոնագիրք, որը պետք է ընդունեն բոլոր աշխատակիցները: Սակայն, քանի որ չկա մասնավոր անվտանգության որևէ ազգային ընկերակցություն կամ միություն, որը կմշակեր և կվերահսկեր ոլորտի չափորոշիչների կիրարկումը, անհնար է ստուգել, թե արդյոք ԱՍԸ-ներն իրոք պահպանում են այն կանոնները, որոնք սահմանում են իրենց իսկ համար:

Հարցազրույցներին մասնակցած ԱՍԸ-ներից և ոչ մեկը երբեք չեղ ենթարկվել իշխանությունների կողմից անցկացվող կանոնավոր տեսչական ստուգման, իսկ մի ընկերություն էլ նշել է, որ հնարավորության դեպքում իրենք խուսափում են անվտանգության ոլորտի և ոստիկանության միջև համագործակցությունից, քանի որ մինյանց դիտում են որպես հակառակորդներ, այլ ոչ գործընկերներ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում: Այս պնդումը, սակայն, չեն պաշտպանել այլ ընկերությունները: Այդուհանդերձ, ընդհանուր համաձայնություն կա այն հարցում որ անվտանգության երկու մատակարարների միջև գոյություն ունի փոխադարձ անվտանգություն, իսկ համագործակցություն տեղի ունի միայն այն ժամանակ, եթե ԱՍԸ-ներն այլընտրանք չունեն:

### 3.6 Պրոֆեսիոնալիզմ և վերապատրաստում

Ընդհանուր առնամբ, հայկական ԱՍԸ-ներն իրենց ոլորտի պրոֆեսիոնալիզմի մակարդակը գնահատում են «շատ ցածր»-ից մինչև «բավարար»:

Չկան որևէ միասնական չափորոշիչներ ԱՍԸ-ների կրթական և մասնագիտական տվյալների վերաբերյալ, բացի բոլոր ընկերությունների կողմից հետևած այն զգված օրենքից, որ իրենց աշխատակիցները պետք է պետության զինված ուժերում ծառայած լինեն: Զինված ուժերում ծառայած լինելը դիտվում է որպես բավարար ֆիզիկական և հոգեկան առողջության հուսալի ցուցանիշ: Աշխատանքի ընդունման մյուս պահանջները տարբեր են տարբեր ԱՍԸ-ներում. նրանցից ոնանք պահանջում են, որ թեկնածուներն առաջին օգնության վկայական ունենան, մինչեւ նյութները նախընտրում են, որ դիմորդներն ունենան առնվազն միջնակարգ կրթություն, ինչպես նաև տարբեր ուժային կառույցներում՝ ոստիկանություն, անվտանգության ծառայություններ կամ պաշտպանության ոլորտ, աշխատանքի փորձ: ԱՍԸ-ներից մեկը նշել է, որ աշխատանքի չի ընդունում անձանց, ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում կամ ով դատվածություն ունի: Սակայն, ըստ այդ նույն ԱՍԸ-ի՝ աշխատակիցների կրթության և փորձառության ստուգումների անցկացումը, որը տարածված գործելակարգ է բազմաթիվ այլ պետություններում, չի անցկացվում Հայաստանում: Հետևաբար, ԱՍԸ-ների համար մատչելի միակ տարբերակն այն է, որ աշխատակիցներից պահանջվում է ներկայացնել նոտարի կողմից հաստատված կամ պաշտոնական գրություն ոստիկանությունից, որը կնշի, որ նրանք դատվածություն չունեն: Այս բարդ գործընթացի պատճառով ԱՍԸ-ները ներկայունս ստուգում են միայն այն աշխատակիցներին, որոնց ուղարկում են բարձր անվտանգության վայրեր, ինչպիսիք են դիվանագիտական առաքելությունները:

Գոյություն չունեն նաև անվտանգության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման ընդհանուր չափորոշիչներ, ինչի արդյունքում ձևավորվել է մեթոդների և ուսումնական ծրագրերի մի լայն սպեկտր, որոնց միջոցով ընկերությունները վերապատրաստում են իրենց աշխատակիցներին, որպեսզի նրանք պատրաստ լինեն ստանձնելու պահապանի կամ խիստ պաշտպանության ծառայողի պարտականությունները: Պետք է նշել, որ ոլորտում միանգամայն բացակայում է վստահությունը մեկմեկու ուսումնական մեթոդների նկատմամբ: Այս ուսումնասիրության շրջանակներում հարցմանը մասնակցած ուր ԱՍԸ-ներից միայն մեկն ունի միջազգայնորեն ճանաչված ISO 9001 որակյալ կառավարման չափորոշիչները Ստանդարտացման միջազգային կազմակերպությունից:

Աշխատակիցների վերապատրաստման ոլորտում ներդրումները տարբեր ընկերություններում տարբեր են: Որոշ ԱՍԸ-ներ մասնագիտական համագործակցություն են հաստատել Բուլղարիայի, Կանադայի, Ռուսաստանի և Մթ-ի ԱՍԸ-ների հետ և դասընթացներ են առաջարկում բանակցություններ վարելու, ռմբային սպառնալիքները կառավարելու, միջադեպերը քննելու, էվակուացումը պլանավորելու, ֆիզիկական վտանգները բացահայտելու, գեկույցներ գրելու և անվտանգության ստուգումների ոլորտում, եթե նշելու լինենք դրանցից մի քանիսը: Այլ ընկերություններ սահմանել են ավելի մեղմ չափորոշիչներ և պահանջում են, որպեսզի իրենց աշխատակիցները կարողանան հարգալից հաղորդակցություն վարել հեռախոսից կամ երկուղի ռադիոսարքերից օգտվելիս, ինչպես նաև անցնեն թմրադեղերի օգտագործման կանոնավոր ստուգումներ:

Ինչպես պրոֆեսիոնալիզմի և վերապատրաստման չափորոշիչները, աշխատավարձերի չափերը նույնպես խիստ տարբեր են և կախված են պաշտոնից, պահպանվող օբյեկտից և շուկայի ներգործությունից: Միջին

ամսեկան աշխատավարձը 50,000 կամ 60,000 ՀՀ դրամ է՝ կախված հերթափոխի գրաֆիկից: Դայտնի է, որ որոշ ընկերություններ իրենց կրտսեր աշխատակիցներին վճարում են 35,000-ից 40,000 ՀՀ դրամ, մյուսները կարող են վճարել 90,000-ից 100,000 ՀՀ դրամ: Ավագ ծառայողները կամ դեկավարները վաստակում են ամսեկան 120,000-ից 200,000 ՀՀ դրամ՝ կախված աշխատած ժամերի քանակից կամ պարտականությունների բնույթից: Դամեմատական կարգով՝ Պետական պահպանության ծառայության ոստիկանության ծառայողն ստանում է 80,000-ից 85,000 ՀՀ դրամ՝ կախված զինվորական կոչումից: Պետք է նշել, որ ԱՄԸ-ների աշխատակիցների վերաբերյալ նշված այս թվերը պարզապես ցուցիչներ են և, հավանաբար, իրականում շատ ավելի ցածր են՝ կախված պատվիրատուի հետ կնքված պայմանագրից:

### **3.7 ԱՄԸ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱ ԻԵՒԱՆԿԱՐՆԵՐԸ**

Ըստ ինքնազնահատումների՝ ԱՄԸ-Ները խառը կանխատեսումներ ունեն Դայաստանում անվտանգության մասնավոր հատվածի վերաբերյալ: Մի կողմից, անվտանգության աճող պահանջարկը դիտվում է որպես ոլորտի աստիճանական ընդլայնման ցուցանիշ: Այս տեսակետը կիսում են պետության խոշոր ԱՄԸ-Ները: Մյուսները կանխատեսում են, որ ներկայումս գրանցված ԱՄԸ-Ների թիվը կանխատեսելի ապագայում նույն է մնալու կամ նույնիսկ անկում է ապրելու ոչ պատշաճ ներքին ֆինանսական կառավարման, Դայաստանի տնտեսության և գոյատևման նպատակով նախկին մրցակիցների հետ միավորվելու պատճառով: Այս գեկույցը գրելու ժամանակ երկու ընկերություններ միավորվելու գործընթացում էին: Դարցմանը մասնակցած բոլոր ԱՄԸ-Ները համաձայն են, սակայն, որ անվտանգության մասնավոր հատվածի մանրակրկիտ կարգավորումը հանդես կգա որպես երաշխիք իրենց կողմից հնարավոր մասնագիտական վատ վարքագծի դեմ և, ընդհանուր առնամբ, կմեծացնի անվտանգությունը: «Թիկնագորային գործունեության մասին» օրենքի մշակման հարցում ԱՄԸ-Ների կողմից դրսևորած մեծ հետաքրքրության պատճառով խորհրդարանական հանձնաժողովի և անվտանգության ոլորտի միջև կգումարվի աշխատանքային հանդիպում, որպեսզի ընկերությունները կարողանան բարձրածայնել իրենց մտքերն ու մտահոգությունները:

### **4. «Թիկնագորային գործունեության մասին» օրինագծի վերաբերյալ՝ ԱՄԸ-Ների դիտողությունների վերանայում**

«Թիկնագորային գործունեության մասին» ՀՀ օրենքի վերջին նախագծի (հետայսու՝ օրինագիծ) վերաբերյալ արված իրենց դիտողություններում՝ ԱՄԸ-Ները բացահայտել են անորոշություններ և փոփոխության կարիք հետևյալ կետերում.

- ա/ թիկնազորային ծառայության սահմանումը,  
 բ/ օտարերկրացիներին ԱՍԸ-ների գործունեությունում ներգրավելու արգելքը,  
 գ/ ԱՍԸ-ների աշխատակիցների վերապատրաստումը,  
 դ/ հրազենի գործադրումը,  
 ե/ հրազենի պատշաճ պահպանումը,  
 զ/ և ԱՍԸ-ների իրավաչափ վարքագիծն արտակարգ իրավիճակներին արձագանքելիս:

Կարծիք կա, որ ներկայիս նախագծի 3-րդ հոդվածում նշված չէ հետևողական սահմանում, թե ԱՍԸ-ներն ինչ ծառայություններ իրավունք ունեն տրամադրելու իրենց պատվիրատուներին: Մասնավորապես՝ կարծիք կա, որ օրինագիծը տարբերակում չի պարունակում ֆիզիկական և տեխնիկական անվտանգության միջև: Մինչ առաջինը, որպես կանոն, ներառում է մարդու կողմից կառավարվող ստատիկ և պարեկապահակային անվտանգության, արագ արձագանքման, խիստ պաշտպանության ծառայությունները և բեռնափոխադրումների անվտանգ ուղեկցումը, վերջինը վերաբերում է անվտանգության սարքակազմի և ծրագրակազմի, օրինակ՝ տեսախցիկների և էլեկտրոնային ազդանշանային համակարգերի տեղադրմանը: Պետք է նշել, սակայն, որ 9-րդ հոդվածն առավել մանրամասն է սահմանում, թե ԱՍԸ-ներն ինչ ծառայություններ կարող են տրամադրել:

Օրինագծի 2-րդ հոդվածը, որն արգելում է օտարերկրացիների մասնակցությունը Հայաստանի անվտանգության մասնավոր հատվածի գործունեությանը, նույնպես քննադատության և արժանացել ԱՍԸ-ների կողմից: Նրանք փորձել են իրենց համար հստակեցնել հատկապես այն հարցը, թե արդյոք օտարերկրացիներն իրավունք ունեն որպես սեփականություն ունենալու և/կամ տիրապետելու բաժնետոնսերի հայկական ԱՍԸ-ներում: Նրանք անհրաժեշտ են համարել վերանայել այս հոդվածը՝ խուսափելու երկակի մեկնարանություններից ապագայում:

ԱՍԸ-ների աշխատակիցների ներկայիս վերապատրաստման չափորոշիչները գնահատվել են անբավարար այս ուսումնասիրության շրջանակներում հարցմանը մասնակցած ընկերությունների մեծամասնության կողմից: Ավելի մանրամասն, նվազագույն չափորոշիչները պետք է ներառեն միջնակարգ կրթությունը, զինված ուժերում ծառայությունը, ֆիզիկական և հոգեկան լավառողջությունը, ինչպես նաև դատվածության բացակայությունը դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար: Ներկայիս օրինագծի 11-րդ հոդվածն արդեն իսկ ներառում է այս նվազագույն չափորոշիչները: Այդուհանդերձ, վերապատրաստման լրացուցիչ պահանջներ են սահմանված միայն թիկնապահների համար (տես 17(2)-րդ և 22-րդ հոդվածները) և ոչ՝ այլ ոլորտներում աշխատող պահապանների համար: Ավելին, օրինագիծը չի նատնանշում, թե որ կրթական մարմինն է պատասխանատու անվտանգության պահապանների և թիկնապահների վերապատրաստման համար: Սա հատուկ մտահոգության առարկա է այն ԱՍԸ-ների համար, որոնք նաև հանդես են գալիս որպես վերապատրաստման հաստատություններ թիկնապահների համար: 22(1)-րդ հոդվածը միայն հիշատակում է «համապատասխան լիցենզիա ունեցող ուսումնական հաստատություններ»-ին և չի նշում, թե արդյոք դրանք մասնավոր թե պետական հաստատություններ են<sup>7</sup>:

Վիճահարույց հարց է հրազենի գործադրումը: «Զենքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է գենքի երեք տեսակ՝ ներառյալ

<sup>7</sup> «Թիկնապորային գործունեության մասին» օրինագիծ, (2009), ՀՀ Աժ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով:

քաղաքացիական, ծառայողական և մարտական<sup>8</sup>: ՀՀ Ոստիկանության հետ անցկացված հարցազրույցների համաձայն՝ ներկայումս ԱՄԸ-ներին թույլատրվում է ունենալ միայն քաղաքացիական գենք, որն, ի թիվս այլ գինատեսակների, ներառում է գազային ատրճանակներ և էլեկտրահարող սարքեր: ԱՄԸ-ները հատկապես քննադատաբար էին տրամադրված լիցենզավորման գործընթացի նկատմամբ, քանի որ ընկերության սեփականությունը համդիսացող գազային ատրճանակները պետք է անհատական կարգով վերագրանցվեն այն պահապանի անունով, որն այն կրելու է: Համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ անձը, օրինակ՝ ԱՄԸ-ի սեփականատերը կարող է լիցենզիա ունենալ մինչև 5 քաղաքացիական գենքի համար<sup>9</sup>: Այնուամենայնիվ, այս գործընթացը հաշվի չի առնում գենքի վերագրանցումն առանձին պահապանների անունով: Շատ է խոսվում գործող օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտության մասին, քանի որ այս սահմանափակող միջոցառումներն ուշացումների և ֆինանսական կորուստների պատճառ են դառնում օրինապահ ԱՄԸ-ների համար, որոնք պետք է սպասեն նոր լիցենզիայի տրամադրմանը նախքան կկարողանան նոր շփումներ հաստատել պատվիրատունների հետ:

Հրագենի պահպաննան առնչությամբ մի ԱՄԸ ընդգծել է, որ «Զենքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջները չափազանց անորոշ են և որ այս հարցի առնչությամբ ավելի կոնկրետ դրույթներ պետք է նախատեսել «թիկնազորային գործունեության մասին» օրինագծում: Մասնավորապես, ԱՄԸ-ները պետք է ունենան սեփ, գենք մաքրելու, լցնելու և դատարկելու անկյուն և գենքի ընդունան գրանցամատյան՝ իրականացնելու գործադրվող ողջ գենքի գրանցումը:

Այն ԱՄԸ-ները, որոնք արագ արձագանքնան ծառայություններ են մատուցում պատվիրատուններին, նշել են, որ իրենց համար պետք է հատուկ արտոնություններ նախատեսել, որպեսզի իրենք կարողանան արտակարգ իրավիճակներում կատարել իրենց պարտականությունները: Սրանք նույնպես պետք է նախատեսել օրինագծում՝ ներառելով մերժմաները լուսարձակներով և ձայնային ազդանշաններով գինելում մասին կետ:

<sup>8</sup> «Զենքի մասին» ՀՀ օրենք, (1998 թ հուլիս), ՀՀ Աժ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի նշտական հանձնաժողով:

<sup>9</sup> Նույնը, 13-րդ հոդված:

## **5. Կարգավորման մոդելներ՝ հիմնված միջազգային լավագույն գործելակարգերի վրա**

Միջազգայինորեն երեք ամենաընդունված կարգավորման մոդելներն են *ոլորտի ինքնակարգավորումը*, *կառավարության կարավորումը* և *հիբրիդային կարավորումը* (մասնավոր ոլորտ-կառավարություն համատեղ կարգավորումը): Վերահսկողության խստացման շարժադրման մասնավոր ոլորտի և նպատակները գգալիրեն տարբերվում են: Ըստ որոշ տեսաբանների՝ Եվրամիությունում (ԵՄ) անվտանգության մասնավոր հատվածի կարգավորման շահերը պետք է դիտարկվեն շահագրգիռ երեք խմբերի տեսանկյունից, որոնք ներառում են քաղաքացիներին, (նտահոգված ծառայության որակով), անվտանգություն ապահովողներին (նտահոգված մրցակցությամբ) և պետությանը (նտահոգված հասարակական կարգով):<sup>10</sup>

Եվրամիությունում ԱՍԸ-ների հանդեպ հսկողություն իրականացնող հաստատությունների տեսակները տարբերվում են և ընդգրկում են (տեղական) ոստիկանությունը (օրինակ՝ Հունաստանում, Դանիայում, Սլովակիայում և Հունգարիայում), տեղական քաղաքացիական իշխանությունները (օրինակ՝ Գերմանիայում, Իտալիայում և Շվեյչարյում), ներքին գործերի նախարարությունը (օրինակ՝ Սլովենիայում, Իտալիայում, Լեհաստանում և Նիդեռլանդներում) և արդարադատության նախարարությունը (օրինակ՝ Լյուքսեմբուրգում): Միայն Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում է, որ ստեղծվել են անվտանգության հատուկ մարմիններ, որոնք գործում են պետական և մասնավոր անվտանգության ոլորտների համագործակցության ներքո (այս է՝ հիբրիդային կարգավորմանը):<sup>11</sup>

### **Ինքնակարգավորում**

Գոյություն ունեն ինքնակարգավորման բազում ձևեր և, այդ իսկ պատճառով, ինքնակարգավորումը միատարր (հոմոգեն) սահմանում չունի: Անհրաժեշտ է տարբերակում նշոցնել անհատական ինքնակարգավորման, երբ մի համակարգ (օրինակ՝ մի կազմակերպություն) ինքնակարգավորվում է առանց արտաքին օժանդակության, և խմբերի ինքնակարգավորման միջև: Վերջին ձևը կապված է ամբողջ ոլորտի, օրինակ՝ անվտանգության մասնավոր հատվածի, ինքնակարգավորման հետ և հաճախ ղեկավարվում է ոլորտի արհմիությունների կողմից<sup>12</sup>: Զուտ կամ կամավոր ինքնակարգավորումը, որը ենթադրում է ամբողջությամբ մասնավոր, կառավարության ուղղակի միջամտությունից անկախ կանոնակարգման և հարկադրման մեխանիզմ, միջազգային պակաս ընդունված է: Ի տարբերություն դրա՝ լիազորված մասնակի ինքնակարգավորումը, որը մասնավորեցումը սահմանափակում է կանոնակարգմանը կամ հարկադրմանը, առավել լայն տարածում ունի<sup>13</sup> միջազգային մակարդակում: Մինչ այժմ Հայաստանում ինքնակարգավորումը հիմնված է ընկերությունների, այլ ոչ՝ ոլորտի

<sup>10</sup> Քուքիեր, Ուեմիջի և Թիմ Քիքլի և Յուստյանա Սուսլա, (2003 թ սեպտեմբեր), «Մասնավոր անվտանգության կանադական կարգավորում», Իրավունքի սոցիոլոգիայի միջազգային հանդես, 31 (3), էջ 246:

<sup>11</sup> Բորն, Յան և Սարինա Կապարինի, Եղեն Քոլ, (2006), «Անվտանգության մասնավոր ընկերությունների կարգավորում. կարգավիճակ և հեռանկարներ, Քրեական խմբիրների եվլուպական կոմիտե», Եվլուպայի խորհուրդ, Քրեական խմբիրների եվլուպական կոմիտե, [http://www.coe.int/t/e/legal\\_affairs/legal\\_co-operation/steering\\_committees/cdpc/Documents/pc-pm%20\(2006\)%2001%20%20e%20\(regulating%20private%20security%20companies\).pdf](http://www.coe.int/t/e/legal_affairs/legal_co-operation/steering_committees/cdpc/Documents/pc-pm%20(2006)%2001%20%20e%20(regulating%20private%20security%20companies).pdf). (կայքի վերջին մուտքը՝ 15/09/2009), էջ 22:

<sup>12</sup> Գանձինգիամ, Նիլ և Ջոգեֆ Ոհս, (1997 թ հոկտեմբեր), «Ոլորտի ինքնակարգավորում. ինստիտուցիոնալ հեռանկար», Իրավունք և քաղաքականություն, 19 (4), էջ 364:

<sup>13</sup> Նույնը, էջ 365:

մակարդակի վրա: Ոլորտի ինքնակարգավորման իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերությունները համագործակցեն միմյանց հետ: Մեր կողմից անցկացրած հարցազրույցների ընթացքում մենք եկել ենք այն եզրակացության, որ ԱՍԸ-ների մեծամասնությունը հետաքրքրված է ընկերակցություն հիմնադրելով: Դետևաբար, այս գլխի նպատակն է կենտրոնանալ ոլորտի ինքնակարգավորման վրա և, հետևաբար, այս գլխի շեշտադրումը կլինի ոլորտի ինքնակարգավորման վրա:

Ոլորտը շահագրգուված է ինքնակարգավորմամբ երեք պատճառով. առաջին, կառավարությունների կողմից բարձրակարգ կարգավորման ստեղծումը հաճախ դանդաղ գործընթաց է, և ոլորտը ժամանակավորապես կարող է լրացնել այդ բացը: Երկրորդ, ինքնակարգավորման մեխանիզմների որդեգրումը ոլորտին հնարավորություն կընձեռի ազդելու սեփական հատվածի՝ կառավարության վերակարգավորման վրա՝ համոզելով օրենսդրին կողիֆիկացնել արդեն իսկ ընդունված կանոնները չնշին փոփոխություններով կամ առանց փոփոխությունների: Եվ վերջին, բայց ոչ պակաս կարևոր պատճառն այն է, որ ինքնակարգավորումը մեծացնում է ոլորտի լեգիստիմությունը՝ ցույց տալով կառավարությանը և պատվիրատուններին մասնագիտական բարձր չափորոշիչներով ծառայություններ մատուցելու իրենց հանձնառությունը:<sup>14</sup>

Ոլորտի արհմիությունները սովորաբար պատասխանատու են ինքնակարգավորման մեխանիզմների մշակման համար, հաճախ՝ վարքագծի կանոնների տեսքով: Սա կամավոր միջոց է, որն ընդգրկում է եթիկայի և/կամ նարդու իրավունքները հարցելու վերաբերյալ մի շարք չափորոշիչներ և կանոններ, որոնք ընկերությունը կամ ոլորտը որոշում է պահպանել իր առօրյա գործունեության ընթացքում: Ոլորտի մակարդակում վարքագծի բարձրակարգ կանոններից են Անվտանգության ծառայությունների եվրոպական կոնֆերացիայի (CoESS), «Uni Europa»-ի, ինչպես նաև SEESAC-ի «Սարայեվոյի մասնավոր անվտանգության ընկերությունների վարքագծի կանոնները»:<sup>15</sup>

Հայաստանում, հարցմանը մասնակցած ԱՍԸ-ների մեծամասնությունը նշել են, որ հետևում են վարքագծի սեփական կանոններին, որոնք ունեն ինչպես բովանդակային, այնպես էլ մանրամասների տարրերություններ: Պատճառն այն է, որ այս ոլորտում դեռևս գոյություն չունի իր բոլոր անդամների կողմից ընդունված մեկ միասնական վարքականոն ունեցող ընկերակցություն: Ընկերակցությունը կկարողանար նվազեցնել առևա վարքականոնների քանակը՝ ընտրելով բոլոր վարքականոնների լավագույն տարրերը և ստեղծելով մի միասնական տարրերակ: Այս տարրերակը հաճախ հասու չէ պետական իշխանություններին, որոնք բացարձակապես գուրկ են վարքականոն ստեղծելու և դրա կիրառմանը հետևելու համար անհրաժեշտ հատկություններից<sup>16</sup>.

Արդյունավետ վարքագծի կանոնները, ըստ դը Նեվերսի, պետք է ներառեն համապարփակ ռազմավարություններ առ այն, թե. ա) ինչպես պետք է ընկերակցությունը հաղորդակցվի կառավարության և հասարակության հետ, թ) ինչ տիպի վերահսկողության և հաշվետվողականության պետք է ենթարկվեն իր անդամները, զ) ինչ պատժատեսակներ պետք է կիրառվեն անդամների հանդեպ

<sup>14</sup> Փերսի, Սարա, (2006), «Ոչ պաշտոնական կարգավորում», Adelphi Series, 46 (384), էջ 58:

<sup>15</sup> «CoESS & Uni Europa» (2003 թ հուլիս), «Վարքագծի և եթիկայի կանոններ անվտանգության մասնավոր հատվածի համար», [www.coess.org/documents/code\\_of\\_conduct.pdf](http://www.coess.org/documents/code_of_conduct.pdf). (կայքի վերջին մուտքը՝ 28/9/2009) ԵՎ Հրաձգային և փոքր տրամաչափի գեներերի հսկողության Հարավ-Արևելյան Եվլոպայի կենսորոն (SEESAC) (2006 թ հուլիս), «Անվտանգության մասնավոր ընկերությունների Սարայեվոյի վարքագծի կանոնները», <http://www.saferworld.org.uk/images/pubdocs/Code%2520of%2520conduct.pdf> (կայքի վերջին մուտքը՝ 28/9/2009):

<sup>16</sup> Փիլսոն, Ուութ և Զիլ Սեյֆանգ, (2001), «Նոր հույս թե՞ կեղծ արևամուտ. Վարքագծի կամավոր կանոններ, աշխատանքի կարգավորում և սոցիալական քաղաքականություն գլոբալացվող աշխարհում», Համաշխարհային սոցիալական քաղաքականություն, 1 (1), էջ 68:

վարքագծի կանոնների խախտման դեպքում և դ) ինչ առավելություններ են ընձեռվելու ինքնակարգավորմանը նաև կազող ընկերություններին: Ըստ դը Նեվերսի: «Կառավարության և հասարակության հետ կանոնավոր հաղորդակցությունն այս հատվածի գործունեության վերաբերյալ մեծ կարևորություն ունի հաշվետվողականության պարտավորության իրականացման համար: Նույնը ճիշտ է նաև վերահսկողության և հաշվետվողականության դեպքում: Առանց թափանցիկության հնարավոր չէ ոչ գնահատել և ոչ էլ հսկել ընկերության կողմից վարքականոնի պահպանման մակարդակը: Պատժատեսակների կիրառումն եական է ինքնակարգավորման արդյունավետության ապահովման համար: Մի ընկերակցություն, որ լոկ քաջալերում է ընկերություններին ընդունելու վարքագծի կանոններ, առանց դրանք խախտելու դեպքում պատժի սպառնալիքի, ստեղծում է մի միջավայր, որտեղ բացասական հեղինակություն ունեցող ընկերությունները կարող են միանալ ընկերակցությանը իրենց հեղինակությունը բարձրացնելու համար՝ առանց փոփոխելու իրենց վարքագիծը: Վարքագծի կանոնների ընդունման առավելությունները ևս պետք է հստակեցվեն ընկերության համար: Հատկապես բարձր մրցակցություն ենթադրող ոլորտներում ընկերությունները գիտակցում են այսպիսի կանոնների առավելությունները, քանզի ցանկանում են պատասխանատու և արհեստավարժ երևալ իրենց պատվիրատունների առջև<sup>17</sup>:

Ոլորտի ինքնակարգավորումը, որին օժանդակում է այդ գործընթացը վերահսկող ընկերակցությունը, բազում առավելություններ ունի: Առաջին, ի տարբերություն պետության, ընկերակցություններն ունեն ներկայացվող ոլորտի մասին փորձագիտական և տեխնիկական գիտելիքի առավել բարձր մակարդակ և ի զրոյի են իրատեսական գնահատականներ տալու նորարարական հնարավորությունների մասին<sup>18</sup>: Ինքնակարգավորման մեկ այլ առավելություն է դրա պարզությունը: Չեն պահանջվում ոչ նոր օրենսդրություն և ոչ էլ կառավարական մակարդակի երկար քննարկումներ, քանզի ընկերակցությունները որոշում են չափորոշիչները և պարտադրում դրանք ողջ ոլորտին<sup>19</sup>: Ֆինանսական տեսանկյունից ևս ինքնակարգավորումն ունի իր առավելությունները, քանի որ դրա հետ կապված վարչական ծախսերն ամբողջությամբ կրում է ոլորտը: Պետական կարգավորման դեպքում կրած բոլոր ծախսերը կվճարվեին հարկատունների գրապաններից<sup>20</sup>: Իրենց ներքին գիտելիքի միջոցով, ոլորտի ընկերակցությունները կօգնեն տարբերակում մտցնելու այն ընկերությունների միջև, որոնք ցանկանում են գործել օրինական միջավայրում և նրանց, որոնք չեն ցանկանում: Օրինապահ ընկերություններին առաջարկելով ընկերակցության անդամությունը և լրացուցիչ համաձայնագրերի հեռանկարներ այնպիսի պատվիրատունների հետ, որոնք նախընտրում են վարձել հուսալի ընկերություններ, ընկերակցությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ օրինախախտ ընկերությունների վրա, որոնց անդամություն չի առաջարկվել, բայց որոնք հարկ են համարում ընդունելու կազմակերպության կողմից սահմանված կանոնները գործարար հնարավորություններից չզույգելու նպատակով<sup>21</sup>: Կարգավորման կանոնների խախտումը կարող է լրացուցիչ կերպով պատժվել այնպիսի ոչ պաշտոնական պարտադրանքի միջոցներով, ինչպիսիք են անոթանքը և ընկերության վատ գործունեության հրապարակումն ընկերակցության կողմից, որն ընտրություն ունի օրինախախտ ընկերության ի ցույց դնելու ինչպես ոլորտի ներսում,

<sup>17</sup> դը Նեվերս, Ռենե, (2008 թ օգոստոս), «Վատահիր, բայց ստուգիր. ինքնակարգավորման արյունավետությունն անվտանգության մասնավոր ոլորտի համար», [http://www.allacademic.com/meta/p\\_mla\\_apa\\_research\\_citation/2/7/9/0/5/p279054\\_index.html](http://www.allacademic.com/meta/p_mla_apa_research_citation/2/7/9/0/5/p279054_index.html).

(կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009), էջ 6-7:

<sup>18</sup> Օգուս, Ենթոնի, (1995) «Ինքնակարգավորման վերահմաստավորում», Իրավաբանական ուսումնասիլությունների Օքսֆորդի հանդես, 15 (1), 97-98:

<sup>19</sup> Փերսի, Ս., էջ 58:

<sup>20</sup> Օգուս, Է. էջ 98:

<sup>21</sup> Փերսի, Ս., էջ 58:

այնպես էլ՝ լայն հաճրության առջև։ Սա, ինչպես նշվում է, կարող է համոզել աչքի ընկած ընկերություններին փոխելու իրենց վարքագիծը և ենթարկվելու ընկերակցության կողմից սահմանված չափորոշիչներին։<sup>22</sup>

Այդուհանդեռձ, ընկերակցությունների՝ կարգավորում պարտադրելու կարողությունները տարբերվում են և պետք է ուշադիր վերլուծության ենթարկվեն նախքան թույլ տալը, որ այս կազմակերպությունները հսկեն անբողջ ոլորտի վարքագիծը։ Ոլորտի ընկերակցության կողմից ոլորտի ինքնակարգավորմանը վերաբերող ամենատարածված քննադատության համաձայն այն հավասարագոր է «ծոտերին վանդակում պահելու վերաբերյալաղվեսի առարկությունը»<sup>23</sup>։ Անվտանգության մասնավոր ոլորտի կողմից տրամադրվող ծառայությունների զգայուն բնույթի պատճառով, իենց ոլորտի կողմից հիմնված ընկերակցությունը չի կարող դրա լավագույն դիտողը լինել։ Չաետք է նոռանալ, որ ընկերակցության առաջնահերթ խնդիրն է ներկայացնել և պաշտպանել իր անդամների շահերը կառավարության և այլ կողմերի առջև։ Յետևաբար, նշվում է, որ ընկերակցությունը գուցե չցանկանա խստորեն պարտադրել և կամ պատժել այն ընկերություններին, որոնք չեն ենթարկվել կանոններին։ Այդ իսկ պատճառով արտաքին կարգավորումը պետք է ավելի խիստ լինի։<sup>24</sup> Այս փաստարկը հաստատվել է բազմաթիվ ուսումնասիրությունների միջոցով, որոնք գալիս են այն եզրակացության, որ ընկերակցությունները, որպես կարգավորման միակ մարմիններ, արձանագրել են իրավախսական անդամներին չափորոշիչների պարտադրման թույլ արդյունքներ<sup>25</sup>։

Նույնիսկ երբ ընկերակցությունը խոստանում է խստորեն պարտադրել իր սեփական կանոնները, ինչպես նաև գործել օրենտիվորեն, այն կարող է հասնել հաջողության միայն այն դեպքում, երբ ոլորտին պատկանող բոլոր ընկերություններն ընկերակցության անդամներ են։ Այդուհանդեռձ, քանի որ անդամությունը կամավոր իինունքներով է, երաշխիք չկա, որ ընկերակցությունը կարող է արդյունավետ կարգավորիչ լինել, քանզի այն չի կարող պատժել այն ընկերություններին, որոնք իր ենթակայության տակ չեն գտնվում՝ նախընտրելով անդամներ չլինել<sup>26</sup>։ Ելնելով այն բանից, որ ընկերակցության տրամադրության տակ եղած սահմանափակ պատժատեսակները (օրինակ՝ հեռացնելը) կիրառելի են ավելի շուտ ընկերությունների, քան անհատների հանդեպ, նրանք նաև հնարավորություն չունեն կանխելու կամ պատժելու անհատ աշխատողների կողմից կատարված հանցագործությունները։<sup>27</sup>

Վերջին, բայց ոչ պակաս կարևոր կետն այն է, որ իրավախսական անդամների հեռացումը նույնպես պատժի ոչ հուսալի մեթոդ է, քանզի ցածրակարգ ընկերությունները կարող են շարունակել գործունեությունը և նույնիսկ հաջողակ դառնալ՝ գործելով հանրային շահից դրւես։ Սա հատկապես ծիշտ է անվտանգության ոլորտի դեպքում, որը բնորոշվել է որպես աճող ոլորտ, որտեղ անօրինական գործունեությունը կարող է քաջալերվել՝ մասնավորապես այն պատվիրատունների կողմից, որոնք իրենք կասկածելի անցյալ ունեն։<sup>28</sup>

<sup>22</sup> Պ. Նեվերս, Ռենե, (2008 թ օգոստոս), «Վստահիր, բայց ստուգիր. ինքնակարգավորման արդյունավետությունն անվտանգության մասնավոր ոլորտի համար», [http://www.allacademic.com/meta/p\\_mla\\_apa\\_research\\_citation/2/7/9/0/5/p279054\\_index.html](http://www.allacademic.com/meta/p_mla_apa_research_citation/2/7/9/0/5/p279054_index.html).

(Կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009), էջ 5:

<sup>23</sup> Փերսի, Ս., էջ 59:

<sup>24</sup> Փերսի, Ս., էջ 59:

<sup>25</sup> Օգուս, Է. էջ 108 ԵՎ Քինգ, Էնդրյու Ա և Մայքլ Զ. Լենոքս, (2000 թ օգոստոս), «Ոլորտի ինքնակարգավորում առանց պատժատեսակների. Քիմիական արդյունաբերության պատասխանատու հեղաժություն ծրագիրը», Կառավարման ակադեմիայի հանդես, 43(4), էջ 713:

<sup>26</sup> Փերսի, Ս., էջ 59:

<sup>27</sup> Փերսի, Ս., էջ 59:

<sup>28</sup> Օ՞քոննոր, Դեմիել և Ռենդի Լիպպերտ, Թելլի Գրինֆիլդ և Ֆիլ Բոյլ, (2004 թ հունիս), ««Դանգիստ հեղափոխություններ» հետո. Օնթարիոյի պայմանագրային անվտանգության գործակալությունների ինքնակարգավորումը», Ոստիկանություն և հասարակություն, 14(2), էջ 151:

## Կառավարության կարգավորում

Պետական կարգավորումը, ի հակադրություն ոլորտի ինքնակարգավորման, կարող է բարձրացնել հասարակական անվտանգությունը, քանի որ ոլորտի վերահսկողության համար պատասխանատու պետական մարմինն առավել հակված կլինի խստորեն կանոններ պարտադրելու և/կամ պատժելու օրինախախտ ընկերություններին, քան ոլորտի ընկերակցությունը: Չպետք է մոռանալ, որ ընկերակցությունը նախ և առաջ ներկայացնում և պաշտպանում է ոլորտի շահերը կառավարության առջև և, այդ պատճառով, կարող է չցանկանալ պարտադրել կանոններ, որոնք վնասում են իր անդամներին: Պետական կարգավորողները կանգած չեն այս երկընտրանքի առջև, քանի որ նրանք հաշվետու են լայն հանրությանը:

Այդուհանդերձ, գործնականում, ԱՄԸ-ների կարգավորումը միայն պետական իշխանությունների (օրինակ՝ ներքին գործերի նախարարության կամ արդարադատության նախարարության) կողմից հաճախ խնդրահարուց է և նույնպես ոլորտի արդյունավետ վերահսկողություն չի երաշխավորում: Թերությունները, որոնք մատնանշվել են պետության կողմից վերահսկող ԱՄԸ-ների կարգավորման ուսումնասիրության ընթացքում միջազգայնորեն կապված են կարգավորման ռեսուրսների անբավարար ծավալի, պատասխանատու իշխանությունների կողմից ԱՄԸ-ի աշխատակազմի համար ցածր որակավորման չափորոշիչներ սահմանելու, բյուրոկրատական անարդյունավետ ընթացակարգի հետևանքով լիցենզիաներ տալու երկարատև ծգգումների և իրավապահ մարմինների և ԱՄԸ-ների միջև շահերի բախումների հետ:

Երկրների մեծ մասում ԱՄԸ-ները կարգավորվում են լիցենզավորման համակարգի միջոցով: Այս համակարգի օգնությամբ կարգավորող մարմինը կարող է թույլտվություն (օրինակ՝ լիցենզիա) տալ ԱՄԸ-ին և/կամ դրա աշխատակիցներին, եթե լիցենզիա հայցողը կատարել է հատուկ պահանջները (օրինակ՝ աշխատողների մասնագիտական վերապատրաստում, գենք կրելու և պահելու թույլտվություն):

Այդուհանդերձ, այս մոդելի հետ կապված խնդիրներ են առաջանում այն ժամանակ, երբ հականցակցային վարքագծի առաջացման վտանգ է ի հայտ գալիս: Դանածայն Յունիչարի և այլքի՝ դա կարող է առաջ գալ, երբ ոստիկանական ուժերը շահույթ ստանալու նպատակով լիազորված են տրամադրելու անվտանգության նույն ծառայությունները, ինչ ԱՄԸ-ները: Վերցնենք Սերբիայի օրինակը, որտեղ Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՍ) պատասխանատու է ԱՄԸ-ներին աշխատանքի լիցենզիա (իրավունք) տրամադրելու համար, և ըստ հեղինակների, մեծ ոիսկ կա, որ ոստիկանությունը, որը ենթարկվում է ՆԳՍ-ին, կօգտագործի այդ մարմնի հետ իր «կապերը», որպեսզի «վերացնի մրցակցությունը» [ԱՄԸ-ների կողմից առաջացրած] և հնարավորինս իր մենաշնորհը հաստատի շուկայում<sup>29</sup>: Խնդիրն այս դեպքում այն է, որ քաղաքացիների կողմից վճարվող հարկային գումարները, որոնք հասարակական անվտանգության ապահովման համար հատկացվում են ոստիկանությանը, նպատակային չեն օգտագործվի: Դրա փոխարեն, իր ծառայությունները տրամադրելով, ինչպես յուրաքանչյուր այլ ԱՄԸ, ոստիկանությունը կվերահասցեագրի իր մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առևտրային պատվիրատուններին՝ ըստ էության շեղվելով լայն հանրության հանդեպ իր ունեցած պարտականություններից: Այս իրադրությունը փոխելու միակ եղանակը կլիներ այն,

<sup>29</sup> Յունիչար, Ելենա և Մարկո Միլոշեվիչ, Պրեորագ Պետրովիչ, Սոնյա Ստոյանովիչ, (2008), «Անվտանգության մասնակիր ընկերությունները Սերբիայում. բարեկամ թե՝ թշնամի», Քաղաքացիական-ռազմական հարաբերությունների կենտրոն, [http://www.ccmr-bg.org/upload/document/0810211610\\_private\\_security\\_co.pdf](http://www.ccmr-bg.org/upload/document/0810211610_private_security_co.pdf). (կայքի վերջին մուտքը՝ 26/9/2009), էջ 77:

որ ոստիկանությանն արգելվեր իր ծառայությունները մատուցել վճարող, մասնավոր պատվիրատուններին կամ զգալիորեն կրծատվեր այդ ծառայությունների սպեկտրը:<sup>30</sup>

Ի հավելումն, այն պետություններում, որտեղ առկա են մտերմիկ, ոչ պաշտոնական հարաբերություններ ոստիկանության և ԱՍԸ-ների տնօրենների միջև, որոնք իրենք ոստիկանական կամ ռազմական անցյալ ունեն, առկա է կոռուպցիայի ռիսկ: Որպես օրինակ օգտագործելով Բուլղարիայի իրավիճակը՝ Գունեվը նշում է, որ կոռուպցիան սովորաբար այնտեղ է, որտեղ առկա են մրցույթներ՝ շահաբեր պետական գնումների պայմանագրերի համար: ԱՍԸ-ներն այս դեպքում այդ պայմանգրերը ձեռք բերելու համար կաշառում են իրենց «կապերին»: Բարձրագույն մակարդակում, կոռուպցիան կարող է հանդես գալ «ազդեցության առուվաճառքի» տեսքով, եթե քաղաքական գործիչները հանդիսանում են ԱՍԸ-ների սեփականատերեր:<sup>31</sup> Այն պետություններում, որտեղ իրավիճակն այսպիսին է, և գործող օրենսդրությունը չի կարողանում միջոցներ ձեռնարկել այդպիսի գործունեության դեմ, քաղաքական գործիչը կարող է օգտագործել իր ազդեցությունը՝ ապահովելու, որ որոշ ԱՍԸ-ներ առավել խիստ կարգավորվեն, քան մյուսները՝ կախված իր գործարար շահից: Այլ տարբերակները ներառում են պետական գնումների պայմանագրերի ձեռքբերումը կառավարական այլ մարմինների վրա ազդեցություն գործելու՝ ներառյալ նաև կաշառելու միջոցով: Եվ վերջում, բայց ոչ պակաս կարող է այն, որ քաղաքական գործիչը խնդրում կամ հարկադրում է անվտանգության ծառայություն փնտրող գործարարին, պայմանագիր ստորագրել իր ԱՍԸ-ի հետ՝ ի հատուցում որոշ ծառայությունների<sup>32</sup>:

ԱՍԸ-ներին լիցենզիա շնորհելու՝ պետության բացառիկ մենաշնորհի հետ կապված մեկ այլ խնդիրն այն է, որ հաճախ կարգավորող մարմնին չեն տրամադրվում իր աշխատանքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ հավելյալ ֆինանսական և/կամ մարդկային ռեսուրսներ: Արդյունքում, լիցենզիա ստանալու ընթացակարգը հաճախ երկարատև է և կարող է տնտեսապես վնասել այն ԱՍԸ-ներին, որոնք հենցում են շուկայի, այլ ոչ՝ պետական բյուջեի վրա: Դրանից բխող վտանգն այն է, որ ԱՍԸ-ները կարող են հակված լինել վարձելու աշխատակիցներ՝ առանց լիցենզիա ուժնակությունը, պատվիրատունների հետ պայմանագրերը չկորցնելու նպատակով<sup>33</sup>: Բնականաբար, եթե ընկերությունները վարձում են աշխատողների, որոնք ստուգված չեն իշխանությունների կողմից, պատասխանատու պաշտոնների են նշանակում նրանց և/կամ ապահովում զենքով, իրական վտանգ է առաջանում, որ քաղաքացիների անվտանգությունը կարող է հարցականի տակ դրվել: Աշխարհի տարբեր պետությունների նախադեպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական իշխանությունը բացառիկ պատասխանատվություն է կրում ԱՍԸ-ների կարգավորման համար, սակայն չունի բավարար ռեսուրսներ այդ աշխատանքի իրականացման համար, և չի կարող երաշխավորվել արդյունավետ վերահսկողություն<sup>34</sup>:

## Նիբորիդային կարգավորում

<sup>30</sup> Յունիջար և այլք, պար. 78 :

<sup>31</sup> Գունեվ, Ֆիլիպ (2006), «Բուլղարիայի անվտանգության մասնավոր հատվածը», Ալեն Արայիդենի և Սարինա Կապարինիի մոտ (Խմբ.): «Մասնավոր ներակատարներ և անվտանգության կառավարում», [se2.dcaf.ch/serviceengine/Files/DCAF/.../bm\\_yb\\_2006.pdf](http://se2.dcaf.ch/serviceengine/Files/DCAF/.../bm_yb_2006.pdf). (Լայքի վերջին մուտքը՝ 15/9/2009), էջ120:

<sup>32</sup> Գունեվ, Ֆ. էջ 120:

<sup>33</sup> Յունիջար և այլք, պար.75-76:

<sup>34</sup> Յունիջար և այլք, պար. 75-76 Եվ Ղեյլիս, Ռոբերտ Ս. և Քրիստոֆեր Ու. Օրտիզ, Սարա Դարուշ, Զեմնի Այրիշ, Արթուր Ալվարադ, Դայանա Ղեյլիս, (2003), «Մասնավոր ոստիկանության համրային հաշվետվողականությունը. դասեր և նորություններ», Յոհաննեսբուրգից և Մեքսիկա Սիթիից», Պատմականություն և հասարակություն, 13 (2), էջ 202 ԵՎ Սթեմնինգ, Ֆիլիպ Ս. (2000 թ սեպտեմբեր), «Մասնավոր ոստիկանության լիազորություններ և հաշվետվողականություն», Թրեական քաղաքականության և հետազոտությունների եվրոպական հանդես, 8 (3), էջ 340 ԵՎ Գունեվ, Ֆ., էջ117:

Կարգավորման բացառիկ լիազորությունները կառավարությանը կամ նաև նախարարությանը ուղղված է պահպանական և հարկադրման համար կամ անարդյունավետ է վերահսկողության և հարկադրման, ինչպես նաև ԱՄԸ-ների և իրավապահ մարմինների միջև շահերի բախնան տեսանկյունից: Այլընտրանք կարող է հանդիսանալ Միացյալ Թագավորությունում գործող կարգավորման հիբրիդային մոդելը: Անվտանգության ոլորտի մարմինը (ԱՊՍ), որը գործում է սկսած 2003 թ, անկախ մարմին է՝ ստեղծված կարգավորելու անվտանգության մասնավոր հատվածը և միաժամանակ զարգացնելու համագործակցությունն անվտանգություն ապահովող պետական և նաև նախարարությունների միջև: Այս մարմնի հիմնական պարտականությունն է ԱՄԸ-ների համար աշխատող բոլոր անհատների լիցենզավորումը և կամավոր հիմունքներով հաստատված ընկերությունների համակարգի կառավարումը, որին ԱՄԸ-ները կարող են միանալ՝ ոլորտի ներսում իրենց սեփական վարկը բարձրացնելու նպատակով՝ ԱՊՍ-ի կողմից սահմանված չափորոշիչների ցանկը պահպանելու պայմանով: Լիցենզիան տրվում է պայմանով, որ թեկնածուի քրեական անցյալի ամբողջական ստուգում անցկացվի քրեական տվյալների գրասենյակի կողմից, և որ վերջինս անցնի համապատասխան վերապատրաստում: ԱՊՍ-ն ունի բազում տեսուչներ, որոնք իրավունք ունեն ստուգելու կամավոր հիմունքներով հաստատված ընկերությունների համակարգում ընդգրկված ԱՄԸ-ների տարածքը՝ համոզվելու, որ անձնակազմը վավերական լիցենզիաներ ունի:<sup>35</sup>

ԱՊՍ-ի օժանդակությամբ պետությունը «համագործակցում է անվտանգության ոլորտի հետ՝ փոփոխություններ ապահովելու հենց ներսից» կամ «վերափոխելու ոլորտի ինքնավերաբերությունը»<sup>36</sup>: Այդ մասին է վկայում Մարմնի կառավարման վերին օրակի և խորհրդի կազմը, քանի որ երկուսն էլ կազմված են կառավարության կազմում, պետության իրավապահ մարմիններում և/կամ գործարար շրջանակներում՝ ներառյալ անվտանգության մասնավոր հատվածը, երկարատև մասնագիտական փորձ ունեցող անհատներից<sup>37</sup>: Մասնագիտական փորձառության այս խառնուրդը նպաստավոր է և պետության և ոլորտի համար, քանի որ դա ապահովում է, որ երկուսի շահերն ել ներկայացվեն հավասար և պատշաճ կարգով:

2001 թ Անվտանգության մասնավոր ոլորտի ակտը (հետայսու՝ Ակտը), որի միջոցով հիմնադրվել է ԱՊՍ-ն, Ներքին գործերի քարտուղարին (այն է՝ Ներքին գործերի նախարարին) լիազորում է ընդլայնել Մարմնի կարգավորման գործունեության սահմանները՝ ենթաօրենսդրական ակտերի միջոցով տարածելով այն անվտանգության ոլորտի այլ հատվածների վրա<sup>38</sup>: Այս կարգը հնարավորությունն է ընձեռում Ներքին գործերի քարտուղարին, հարկ եղած դեպքում, զգալի պետական ազդեցություն գործադրել ոլորտի կարգավորման վրա: Նախատեսվում է, որ Ակտը պետք է ճկուն լինի, քանի որ խորհրդարանը գիտակցում է, որ ԱՊՍ-ի աշխատանքն առաջընթաց է ապրում, և գուցե հարկ լինի փոփոխել գործող օրենքները և/կամ ավելացնել նորերը: Այս կարգը նաև հնարավորությունն է տալիս խուսափելու այնպիսի հավանական իրավիճակից, որտեղ խորհրդարանը պետք է ավելի ուշ լրացնից օրենսդրություն ընդունի: Օրինակ՝ Ներքին գործերի քարտուղարն իրավունք ունի փոփոխիմելու ԱՄԸ-ների կամավոր վերստուգման և հաստատման ներկա համակարգը

<sup>35</sup> Քրառափորդ, Աղամ, (2003), «Ոստիկանության գործելակարգը Մթ-ում. ոստիկանություն ոստիկանությունից դուրս», Թիմ Սյուբերն, Խմբ., Ոստիկանության ձեռնարկ, Uffculme Cullompton: Willan Publishing, էջ151:

<sup>36</sup> Զերմեր, Լյուչիա, (2006) «Դեղիեղուկ անվտանգություն. շուկայի կառավարում հանցագործությունների հսկողության նպատակով», Քրեաքանություն և քրեական պրդարադատություն, 6(3), էջ 279:

<sup>37</sup> Անվտանգության ոլորտի մարմին (2009), «բարձր օրակի կառավարում», [http://www.the-sia.org.uk/home/about\\_sia/sia\\_management/](http://www.the-sia.org.uk/home/about_sia/sia_management/). (կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009)

Անվտանգության ոլորտի մարմին, (2009), «Խորհրդի անդամները», [http://www.the-sia.org.uk/home/about\\_sia/sia\\_board/](http://www.the-sia.org.uk/home/about_sia/sia_board/). (կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009):

<sup>38</sup> Բարեն, Մարկ, (2007), «Եվրոպական անվտանգության մասնավոր հատվածի կարգավորման գնահատում Եվրոպայում», Քրեաքանության Եվրոպական հանդես, 4, էջ 115:

հարկադիր համակարգով, եթե համարի, որ դա ճիշտ է ապագայի համար: Այդուհանդերձ, Ներքին գործերի քարտուղարին՝ Ակտի պայմանների փոփոխություններ առաջարկելու և անվտանգության ծառայությունների պայմանների հետազոտություն անցկացնելու կամ օժանդակելու հարցում՝ ԱՌՍ-ն կառավարությունից անկախ է<sup>39</sup>.

Այս մարմնի բոլոր անդամները նշանակվում են Ներքին գործերի քարտուղարի կողմից՝ առավելագույնը հինգ տարով: ԱՌՍ-ն ֆինանսավորվում է բացառապես Ներքին գործերի քարտուղարի կողմից Խորհրդարանի տրամադաշ ֆինանսական միջոցներով և պետք է ֆինանսական հաշվետվություն և տարեկան գեկույց ներկայացնի Խորհրդարանին<sup>40</sup>: Ներքին գործերի քարտուղարին և ԱՌՍ-ին վերապահված իրավունքներն ու լիազորությունները Մասնավոր անվտանգության ակտը վերածում են նի մոդելի, որը հարգում է անվտանգության մասնավոր հատվածի շահերը՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով, որպեսզի պետությունը որոշակի վերահսկողություն իրականացնի այդ ոլորտի նկատմամբ՝ ԱՌՍ-ի հանդեպ վերահսկողություն սահմանելու միջոցով: Այդուհանդերձ, այս մոդելում և հետազոտողները մի շարք խնդիրներ են արձանագրել Մարմնի ստեղծման օրվանից ի վեր այս վեց տարիների ընթացքում:

Հավանության արժանացած կապալառուի համակարգը, որը նախաձեռնվել է ԱՌՍ-ի կողմից, և որին ԱՄԸ-ները կարող են միանալ ոլորտի ներսում իրենց սեփական վարկը բարձրացնելու նպատակով՝ ԱՌՍ-ի կողմից սահմանված չափորոշիչների ցանկը պահպանելու պայմանով, համարվել է թույլ և անարդյունավետ՝ կամավորության սկզբունքի պատճառով: Վիճարկվում է, որ անվտանգության մասնավոր ոլորտում առկա մրցակցության բարձր մակարդակի պայմաններում որոշ ընկերություններ առաջ կանցնեն մյուսներից՝ խուսափելով այն ծախսատար չափորոշիչներից, որոնք պետք է պահպանեն հավանության արժանացած կապալառուները<sup>41</sup>:

Դեռ ավելին, ԱՌՍ-ի կարգավորման լիազորությունները տարածվում են լոկ ԱՄԸ-ներում ընդգրկված անհատների, այլ ոչ՝ ներքին անվտանգության պահպանների վրա, որոնցից չի պահանջվում լիցենզիա ունենալ: Սա համարվում է «էական բացթողում», քանի որ բացասաբար է անդրադառնում ամբողջ անվտանգության մասնավոր հատվածի հետևողական կարգավորման նպատակի վրա: Լիցենզիաների և վերապատրաստման մեջ ծախսերի պատճառով, որոնք հասնում են մինչև 1000 եվրոյի, որոշ պատվիրատուններ գայթակղվում են աշխատանքի ընդունելու ավելի էժան, լիցենզիա չունեցող ներքին աշխատողների և այդպիսով խուսափում կարգավորումից<sup>42</sup>:

Ինչպես պետական կարգավորման և ինքնակարգավորման դեպքում, կարգավորման հիբրիդային համակարգը կարող է նաև անարդյունավետ լինել, եթե ընդունված չափորոշիչները պատշաճ կերպով չեն պարտադրվում: Այսպիսին է իրավիճակը ԱՌՍ-ի դեպքում, որը մեղադրվում է օրինախախտ խիստ պաշտպանության օպերատորների (ԽՊՕ) նկատմամբ քննություն և հետապնդում իրականացնելու հարցում բավարար քայլեր չձեռնարկելու մեջ: Համաձայն Լոնդոնի (ՄԹ) վերաբերյալ՝ Փեյթոնի ուսումնասիրության բացահայտումներին՝ ԱՌՍ-ն կենտրոնանում է այն ԱՄԸ-ների մոնիթորինգի վրա, որոնք տրամադրում են պահպանների և պահաների ղեկավարման ծառայություններ, քանի որ դրանք ավելի հեշտ նկատելի են, քան ԽՊՕ-ները, որոնք, արդյունքում, բացահայտումներից կամ հետապնդումից գերծ են մնում: Հարցման մասնակիցների 94%-ը հաղորդում են,

<sup>39</sup> Զեյսն-Լոյդ, Լեռնարդ (2003), «Քվազի-ոստիկանություն», Լոնդոն. «Cavendish Publishing», պար. 81-82:

<sup>40</sup> Զեյսն-Լոյդ, Լ. (2003). էջ 82:

<sup>41</sup> Բարոն, 2007, էջ115:

<sup>42</sup> Բարոն, էջ 115-116:

որ թիկնապահ աշխատելու ընթացքում իրենց երբեցե չի մոտեցել ԱՌՍ-Ը<sup>43</sup>: Այս բացահայտումները ողբալի են: 2008 թ Մարմինն աշխատանքի է ընդունել ընդհանուր թվով 54 չափորոշիչների պահպանան և հարկադրման գծով աշխատողների «մոտ 200,000 լիցենզավորման ենթակա պաշտոնների համար Միացյալ Թագավորության անհայտ թվով վայրերում»<sup>44</sup>:

Մինչ ԱՌՍ-ն իրավասու է լիցենզիաներ հատկացնելու հարցում, այն նախընտրում է չիետապնդել օրինախախտներին՝ մեծ ծախսերից խուսափելու նպատակով<sup>45</sup>: Աննշան խախտումների համար ԱՌՍ-ն գրավոր նախազգուշացումներ է ուղարկում անհատներին: Առավել լուրջ խախտումները կարող են պատճառ դաշնալ լիցենզիայի կասեցման կամ մինչև վեց ամիս ազատազրկման և կամ 5000 ֆունտի (5500 եվրո) չափով տուգանքի համար: Այսպիսով, 2008 թ մայիսի դրությամբ, անհատների դեմ հարուցված չորս գործերից երեքն ավարտվել են տուգանքով, իսկ մեկը՝ տունգանքով և պայմանական պաշտոնանկությամբ: Խնդիրն այն է, որ անհատի լիցենզիայի կասեցումն արդյունավետ պատժատեսակ չէ, քանի որ նա կարող է շարունակել աշխատել որպես ներքին անվտանգության աշխատող, ինչի համար ներկայումս լիցենզիա չի պահանջվում: Այն ԱՄԸ-ները, որոնք տրամադրում կամ կիրառում են չլիցենզավորված աշխատակիցներ, կարող են քննության ենթարկվել Մարմնի կողմից, որը հետապնդում է իրականացնում իր սեփական անունից և կարող է որպես պատիժ նշանակել մինչև իինգ տարի ազատազրկում և անսահմանափակ տուգանքներ: 2008 թ մայիսի դրությամբ, ընդհանուր թվով յոթ հետապնդումներ են ավարտվել կամ ընթացել:<sup>46</sup> Այդուհանդերձ, ինչ վերաբերում է լիցենզիա ունեցող անհատ օրինախախտներին, միայն այս ԱՄԸ-ները, որոնք ԱՌՍ-ի հավանությանն արժանացած կապալառուներ են, կարող են հետապնդվել չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով: Սա, անշուշտ, զգալիորեն թուլացնում է ԱՌՍ-ի՝ որպես կարգավորող մարմնի արդյունավետությունը և պետք է վերանայվի՝ մեծացնելու Մարմնի վերահսկիչ դերը:

## 6. Եզրահանգում և առաջարկություններ

Հայաստանի անվտանգության մասնավոր հատվածը հետևողականորեն կարգավորված չէ: ԱՄԸ-ների գործունեությունը չի վերահսկվում հատուկ օրենքով և որևէ ստուգման չի ենթարկվում, քանի որ ոլորտի վերահսկողության համար պատասխանատու մարմին չկա:

Ուսումնասիրության ընթացքում հարցաշարի պատասխանների գնահատմանը բացահայտվել է, որ ԱՄԸ-ներում պրոֆեսիոնալիզմի բացակայություն է նկատվում աշխատակիցների վերապատրաստման, ընդունման, ինչպես նաև նրանց գործողությունների իրավաչափության մասին գիտելիքների ոլորտում: Անվտանգության ոլորտի աշխատակիցների վերապատրաստման միասնական չափորոշիչներ չկան, ինչի արդյունքում

<sup>43</sup> Փեյթոն, Գլենն Ֆրեզեր, (2007 թ ապրիլ), «Անվտանգության ոլորտի մարմնի ազդեցության գնահատում խիստ պաշտպանության ծառայողների օվերատիվ արդյունավետության վրա», Անբոխի անվտանգության և դրա կառավարման հանդես, 1(1), էջ 6:

<sup>44</sup> Վերահսկողության ազգային գրասենյակ, (17-ը հոկտեմբերի, 2008 թ), «Անվտանգության ոլորտի կարգավորում», [http://www.nao.org.uk/publications/0708/regulating\\_security\\_industry.aspx](http://www.nao.org.uk/publications/0708/regulating_security_industry.aspx). (կայքի վերջին մուտքը՝ 11/9/2009), էջ 19:

<sup>45</sup> Փեյթոն, Գ. Ֆ., էջ 4:

<sup>46</sup> Վերահսկողության ազգային գրասենյակ, էջ 21:

ձևավորվել է մեթոդների և ուսումնական ծրագրերի մի լայն սպեկտր, որոնց միջոցով ընկերությունները վերապատրաստում են իրենց աշխատակիցներին, որպեսզի նրանք պատրաստ լինեն ստանձնելու պահապանի կամ խիստ պաշտպանության ծառայողի պարտականությունները: Քանի որ չկա մոնիթորինգի մարմին, որը կարող էր նվազագույն կրթական չափորոշիչներ սահմանել, չկա երաշխիք, որ վերապատրաստման ներկայիս մեթոդները պատշաճ են ԱՄԸ-ների աշխատակիցներին իրենց պարտականությունների կատարման համար նախապատրաստելու և/կամ նրանց շրջանում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի պատասխանատվություն սերմանելու համար: Քրեական անցյալի հարցում Հայաստանի իշխանություններից ստուգումներ ստանալու հետ կապված դժվարություններն ել ավելի են վատրարացնում իրավիճակը: ԱՄԸ-ների իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական չափորոշիչների բացակայությունը հանգեցրել է ոլորտում անորոշ դրության, իսկ որոշ դեպքերում թերևս նպաստել օրինախստումների կատարմանը (օրինակ՝ խուզարկության և ձերբակալության լիազորությունների մասով):

Սա նաև վերաբերում է ԱՄԸ-ների կողմից քաղաքացիական գենքի (հատկապես գաղային ատրճանակների) տիրապետման և օգտագործման կարգավորման իրավական պրակտիկային: Գաղային ատրճանակների՝ գենքի սեփականատիրոջից առ գործադրողը վերագրանցման գործընթացն ուշացումների պատճառ է հանդիսանում և անտեղի բարդացնում ԱՄԸ-ների գործունեությունը: Քանի որ հարցմանը մասնակցած ԱՄԸ-ներից և ոչ մեկը երբեք պաշտոնական ստուգում չի անցել, դժվար է ապացուցել, որ գաղային ատրճանակ ունեցող բոլոր անձնները մշտապես հետևել են պահանջվող իրավական քայլերին:

Հարցմանը մասնակցած ԱՄԸ-ների մեծամասնությունը բավարարված չեն իրենց այժմյան իրավական կարգավիճակով այն պատճառով, որ իրենց գործողությունները կարգավորող հստակ կանոններ գոյություն չունեն: Նրանց կարծիքով՝ «Թիկնագորային գործունեության մասին» օրինագծի վերջին տարբերակն անավարտ և անորոշ է: Այնուամենայնիվ, հարցմանը մասնակցած բոլոր ԱՄԸ-ները կուզենային ուղղակիորեն հաղորդել «Թիկնագորային գործունեության մասին» ներկայիս օրինագծի կատարելագործմանն ուղղված իրենց նտահոգություններն ու առաջարկությունները ՀՀ ԱԺ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին: Երկու կողմերն ել արդեն համաձայնել են մի խորհրդակցական նիստ գումարել 2009 թ հոկտեմբերին:

Հաշվի առնելով ԱՄԸ-ների գործունեության մասին տեղեկությունները, որոնք ձեռք են բերվել ուսումնասիրության հարցաշարի պատասխանների, ինչպես նաև «Թիկնագորային գործունեության մասին» օրինագծի վերաբերյալ ոլորտի դերակատարներից ստացված դիտողությունների գնահատման արդյունքում՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի անվտանգության մասնավոր հատվածի կարգավորման առնչությամբ հնչած կոչերն արդարացված են:

Այս գեկույցում քննության առնված կարգավորման մեխանիզմները (այն է՝ ոլորտի ինքնակարգավորում, կառավարության կարգավորում և հիբրիդային կարգավորում) հիմնված են միջազգային լավագույն գործելակարգերի վրա: Այս երեքը միասին խորհրդարանական հանձնաժողովին կարող են առաջարկել մտքերի մի լայն շրջանակ, ինչի արդյունքում կարելի է մշակել Հայաստանի համար համապատասխան կարգավորման մոդելը: Պետության և ոլորտի մակարդակում համաժամանակյա կարգավորումը բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայության պարագայում կարող է ապահովել անվտանգության մասնավոր հատվածի հետևողական վերահսկողություն:

## Առաջարկություններ

### Խորհրդարանական հանձնաժողովին

- Հայաստանում կարելի է ստեղծել կարգավորման մարմին՝ հիմնված Անվտանգության ոլորտի բրիտանական մարմնի մոդելի վրա, որը պատասխանատու կիմի անվտանգության մասնավոր ոլորտի բոլոր ընկերությունների և անհատների պարտադիր լիցենզավորման համար:
- Այդ մարմնի ավագ ղեկավարությունը և խորհուրդը կարող են որպես ներկայացուցիչներ ունենալ այնպիսի անձանց, ովքեր կառավարությունում, պետության իրավապահ մարմիններում և անվտանգության մասնավոր ոլորտում աշխատանքի երկարատև փորձ ունեն՝ պահովելու ինչպես ոլորտի, այնպես էլ պետության շահերի հավասարաչափ և պատշաճ ներկայացվածությունը:
- Այդ մարմնը կարող է նշակել պարտադիր վարքականոն, որը կսահմանի վերապատրաստման նվազագույն չափորոշիչները, բոլոր ԱՄԸ-ների աշխատակիցների կրթության համար պատասխանատու հաստատությունները (պետական կամ մասնավոր), վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև պատժատեսակները:
- Կարճատև և մատչելի լիցենզավորման գործընթացը կնվազեցնի շուկայական ճնշումների պատճառով ԱՄԸ-ների կողմից անօրինական գործունեություն ծավալելու հետ կապված ռիսկերը:
- Այդ մարմնին բավական մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրումը ցանկալի է՝ ապահովելու սահմանված չափորոշիչների կիրառումը:
- Քրեական տվյալների գրասենյակի ստեղծումը, որը անվանական վճարի դիմաց կիրականացնի աշխատակցի անցյալի ստուգումներ ԱՄԸ-ների համար, կարող է զգալիորեն մեծացնել անվտանգության մասնավոր հատվածի աշխատակիցների որակը:
- Քաղաքացիական գենքի (օրինակ՝ գազային ատրճանակների) լիցենզավորման և վերագրանցման գործընթացը կարելի է պարզեցնել՝ նվազեցնելու այն հավանական ռիսկը, որ ԱՄԸ-ները կարող են առանց պատշաճ լիցենզիայի գենք կցել իրենց այս կամ այն աշխատակցին:
- ՈՊՊԾ-ի և անվտանգության մասնավոր հատվածի համար հստակ ուղեմիշների սահմանում այն ծառայությունների մասով, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է տրամադրել մասնավոր պատվիրատուններին, ինչը կարող է կրծատել այս երկուսի միջև նրագության ռիսկերը: Սա կարող է հանգեցնել նաև վստահության և համագործակցության ամրապնդմանը:
- Կարելի է քննություն իրականացնել՝ ճշգրտելու մի ԱՄԸ-ի կողմից բարձրաձայնված այն մեղադրանքը, որ լավ կապեր ունեցող այն անձինք, ովքեր անձնական պաշտպանության կարիք ունեն, կարող են ընդունել իրենց մտերիմներին ՈՊՊԾ, որպեսզի վերջիններս ծառայողական գենք ստանան: Քննությունը կարող է կենտրոնանալ այս գործընթացի իրավաչափության և դրա հետ կապված էթիկայի չափորոշիչների վրա:
- Խորհրդարանական հանձնաժողովը կարող է ուսումնասիրել, թե արդյոք մասնավոր անվտանգության աշխատակիցների աշխատավարձերն ապահովում են այն նվազագույնը, որը թույլ կտա ԱՄԸ-ներին գերծ մնալ պատվիրատունների հետ իրենց սեփական աշխատակիցների հաշվին պայմանագրեր ստորագրելուց:
- Ապահովագրությունը կարելի է պարտադիր դարձնել ԱՄԸ-ների բոլոր աշխատակիցների համար, եթե նրանք ծառայության մեջ են: ԱՄԸ-ների՝ վտանգավոր իրադրությունները լուծելու նպատակով ֆիզիկական ուժ գործադրող աշխատակիցները կարող են լուրջ ֆիզիկական և/կամ հոգեկան վնաս հասցնել ինչպես տուժածներին, այնպես էլ մեղավորներին:

## **ԱՍԸ-ներին.**

- Յայաստանում կարելի է ստեղծել ոլորտի արհեստակցական միություն, որը բոլոր ԱՍԸ-ների շահերը և մտահոգությունները կներկայացնի կառավարությանը:
- Այս արհեստակցական միությունը կարող է նշակել միասնական և պարտադիր վարքականուն, որը կսահմանի, թե ինչպես են իր անդամները ենթարկվելու վերահսկողության և հաշվետվողականության, ինչպիսի պատժատեսակներ են կիրառվելու այդ վարքականունը խստորդ անդամների նկատմամբ, և ինչպես են ընկերությունները շահելու ինքնակարգավորումից:
- Ինքնակարգավորմանը խստորեն հետևելը կարող է թույլ տալ անվտանգության մասնավոր ոլորտին համոզելու օրենսդրին կողիքիկացնել արդեն իսկ հաստատված կանոնները՝ չնչին փոփոխություններով կամ առանց դրանց՝ դրանով իսկ խուսափելով առավել խիստ պետական կարգավորումից:

## **ԵԱՀԿ-ի երևանյան դրասենյակին.**

- Անհրաժեշտության դեպքում, ԵԱՀԿ-ի գրասենյակը կարող է միջազգային փորձագետ իրավիրել, որը կօժանդակի խորհրդարանական հանձնաժողովին Յայաստանի անվտանգության մասնավոր հատվածի պատշաճ կարգավորում սահմանելու գործում:
- Արարկիր համայնքում իր Յամայնքային ոստիկանության ծրագրի շրջանակներում՝ ԵԱՀԿ-ի գրասենյակը կարող է աշխատանքային քննարկումներ կազմակերպել, որոնց կմասնակցեն ոստիկանությունը և ոլորտում ակտիվ ԱՍԸ-ները՝ ամրապնդելու փոխվստահությունը, փոխադարձ հարգանքը և ընդգծելու անվտանգության երկու մատակարարների միջև հանգործակցության անհրաժեշտությունը:
- Կարելի է միջազգային խորհրդաժողով իրավիրել, որտեղ անցումային և կայացած ժողովորակարական պետությունների կարգավորողները և ոլորտի ներկայացուցիչները կառաջարկեն լուծումներ, թե ինչպես անվտանգության մասնավոր հատվածում պայքարել կոռուպցիայի դեմ, խուսափել ոստիկանության և ԱՍԸ-ների միջև առկա նրգակցությունից և մեծացնել վերահսկողության մակարդակը:

## **Օգտագործված աղբյուրների ցանկ**

Բեղլյան, Աստղիկ (24-ը փետրվարի, 2006 թ), «Կառավարությունն ընդդեմ մասնավոր թիկնապահների օրինականացման», Armtown, <http://www.armtown.com/news/en/rfe/20060224/200602242/>. (Վերջին անգամ կայք մուտք է գործվել 26/5/2009),

Բորն, Յանս և Մարինա Կապարինի, Էդեն Քոլ, (2006), «Անվտանգության մասնավոր ընկերությունների կարգավորում. կարգավիճակ և հեռանկարներ, Քրեական խնդիրների եվրոպական կոմիտե», Եվրոպայի խորհուրդ, Քրեական խնդիրների եվրոպական կոմիտե, [http://www.coe.int/t/e/legal\\_affairs/legal\\_co-operation/steering\\_committees/cdpc/Documents/pc-pm%20\(2006\)%2001%20%20e%20\(regulating%20private%20security%20companies\).pdf](http://www.coe.int/t/e/legal_affairs/legal_co-operation/steering_committees/cdpc/Documents/pc-pm%20(2006)%2001%20%20e%20(regulating%20private%20security%20companies).pdf). (կայքի վերջին մուտքը՝ 15/09/2009),

Բաթոն, Մարկ, (2007), «Եվրոպական անվտանգության մասնավոր հատվածի կարգավորման գնահատում եվրոպայում», Քրեաբանության եվրոպական հանդես, 4, 109-128,

Բուզատու, Ան-Մարի (30-ը սեպտեմբերի, 2008 թ), «ՊԱՍԸ-ների կարգավորման եվրոպական գործելակարգեր և միջազգային իրավական փաստաթղթերի միջոցով ՊԱՍԸ-ների կարգավորման մասին առաջարկություններ», Զինված ուժերի ժողովադաշտավարական վերահսկողության ժմկի կենտրոն (DCAF), [http://www.unwg.rapn.ru/en/analytics/Expert\\_Paper\\_Buzatu\\_Regulatory\\_Approaches\\_to\\_PMSC2.pdf](http://www.unwg.rapn.ru/en/analytics/Expert_Paper_Buzatu_Regulatory_Approaches_to_PMSC2.pdf), (կայքի վերջին մուտքը՝ 8/09/2009),

«CoESS & Uni Europa» (2003 թ հուլիս), «Վարքագծի և էթիկայի կանոններ անվտանգության մասնավոր հատվածի համար», [www.coess.org/documents/code\\_of\\_conduct.pdf](http://www.coess.org/documents/code_of_conduct.pdf). (կայքի վերջին մուտքը՝ 28/9/2009),

Յրաձգային և փոքր տրամաչափի գենքերի հսկողության Յարավ-Արևելյան Եվրոպայի կենտրոն (SEESAC) (2006 թ հուլիս), «Անվտանգության մասնավոր ընկերությունների Սարայեվոյի վարքագծի կանոնները», <http://www.saferworld.org.uk/images/pubdocs/Code%2520of%2520conduct.pdf>

Քրաուֆորդ, Ադամ, (2003), «Ոստիկանության գործելակարգը ՄԹ-ում. ոստիկանություն ոստիկանությունից դուրս», Թիմ Նյուբերն, Խմբ., Ոստիկանության ձեռնարկ, Uffculme Cullompton: Willan Publishing,

Քուքիեր, Ռենդի և Թիմ Քիքլի և Յուստյանա Սուսլա, (2003 թ սեպտեմբեր), «Մասնավոր անվտանգության կանադական կարգավորում», Իրավունքի սոցիոլոգիայի միջազգային համեստ, 31 (3), 239-265,

Ղեյվիս, Ռոբերտ Ս. և Քրիստոֆեր Ու. Օրտիզ, Սարա Դադուշ, Ջեննի Այրիշ, Արթուր Ավարադր, Դայանա Ղեյվիս, (2003), «Մասնավոր ոստիկանության հանրային հաշվետվողականությունը. դասեր Նյու Յորքից, Յոհաննեսբուրգից և Մեքսիկ Սիթիից», Ոստիկանություն և հասարակություն, 13 (2), 197-210,

Դը Նեվերս, Ռենե, (2008 թ օգոստոս), «Վստահիր, բայց ստուգիր. ինքնակարգավորման արդյունավետությունն անվտանգության մասնավոր ոլորտի համար», [http://www.allacademic.com/meta/p\\_mla\\_apa\\_research\\_citation/2/7/9/0/5/p279054\\_index.html](http://www.allacademic.com/meta/p_mla_apa_research_citation/2/7/9/0/5/p279054_index.html). (կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009),

Գումեվ, Ֆիլիպ (2006), «Բուլղարիայի անվտանգության մասնավոր հատվածը», Ալեն Արայդենի և Մարինա Կապարինիի մոտ (խմբ.) «Մասնավոր դերակատարներ և անվտանգության կառավարում», [se2.dcaf.ch/serviceengine/Files/DCAF/.../bm\\_yb\\_2006.pdf](http://se2.dcaf.ch/serviceengine/Files/DCAF/.../bm_yb_2006.pdf). (կայքի վերջին մուտքը՝ 15/9/2009),

Գանինգհամ, Նիլ և Ջոզեֆ Ոհս, (1997 թ հոկտեմբեր), «Ոլորտի ինքնակարգավորում. ինստիտուցիոնալ հեռանկար», Իրավունք և քաղաքականություն, 19 (4), էջ 364-414,

Յովհաննիսյան Իրինա, (22-ը ապրիլի, 2009 թ), «Յայ պատգամավորների թիկնապահները ձերբակալվել են ճանապարհատրանսպորտային կանոնները

խախտելու համար», <http://www.armenialiberty.org/content/article/1613921.html> (կայքի վերջին մուտքը՝ 26/05/2009),

Զեյտոն-Լոյդ, Լեռնարդ (2003), «Քվազի-ոստիկանություն», London: Cavendish Publishing,

Քինգ, Էնդրյու Ա և Մայքլ Ջ. Լենոքս, (2000 թ օգոստոս), «Ոլորտի ինքնակարգավորում առանց պատժատեսակների. Քիմիական արդյունաբերության պատասխանատու հոգածություն ծրագիրը», Կառավարման ակադեմիայի հանդես, 43(4), 698-716,

Վերահսկողության ազգային գրասենյակ, (17-ը հոկտեմբերի, 2008 թ), «Անվտանգության ոլորտի կարգավորում», [http://www.nao.org.uk/publications/0708/regulating\\_security\\_industry.aspx](http://www.nao.org.uk/publications/0708/regulating_security_industry.aspx). (կայքի վերջին մուտքը՝ 11/9/2009),

Now Public, (24-ը օգոստոսի, 2007 թ), «Թիկնապահները ծեծկութուք են սարքում Երևանում», <http://www.nowpublic.com/bodyguards-fight-yerevan>. (կայքի վերջին մուտքը՝ 20/05/2009),

Օքոննոր, Դենիել և Ռենդի Լիպպերտ, Քելլի Գրինֆիլդ և Ֆիլ Բոյլ, (2004 թ հունիս), ««Հանգիստ հեղափոխությունից» հետո. Օնթարիոյի պայմանագրային անվտանգության գործակալությունների ինքնակարգավորումը», Ոստիկանություն և հասարակություն, 14(2), 138-157,

Օգուս, Էնթոնի, (1995) «Ինքնակարգավորման վերահճաստավորում», Իրավաբանական ուսումնասիրությունների Օքսֆորդի հանդես, 15 (1), 97-108,

Փեյթոն, Գլենն Ֆրեյզեր, (2007 թ ապրիլ), «Անվտանգության ոլորտի մարմնի ազդեցության գնահատում խիստ պաշտպանության ծառայողների օպերատիվ արդյունավետության վրա», Ամբոխի անվտանգության և դրա կառավարման հանդես, 1(1), 4-8,

Փիրսոն, Ռութ և Ջիլ Սեյֆանգ, (2001), «Նոր հույս թե՝ կեղծ արևամուտ. Վարքագծի կամավոր կանոններ, աշխատանքի կարգավորում և սոցիալական քաղաքականություն գլոբալացվող աշխարհում», Համաշխարհային սոցիալական քաղաքականություն, 1 (1), 49-78,

Փերսի, Սարա, (2006), «Ոչ պաշտոնական կարգավորում», Adelphi Series, 46 (384), 53-61,

ՀՀ Աժ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով, (2009), «Թիկնազորային գործունեության մասին» օրինագիծ,

ՀՀ Աժ-ի Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով, (1998 թ հուլիս), «Ձենքի մասին» ՀՀ օրենք,

Անվտանգության ոլորտի մարմին (2009), «Քարձոր օլակի կառավարում», [http://www.the-sia.org.uk/home/about\\_sia/sia\\_management/](http://www.the-sia.org.uk/home/about_sia/sia_management/). (կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009),

Անվտանգության ոլորտի մարմին, (2009), «Խորհրդի անդամները», [http://www.the-sia.org.uk/home/about\\_sia/sia\\_board/](http://www.the-sia.org.uk/home/about_sia/sia_board/). (կայքի վերջին մուտքը՝ 10/9/2009),

Սմբատյան, Յամիկ (13-ը մարտի, 2009 թ), «Դայ ֆոտոլրագրողը դաժանաբար ծեծի է Ենթարկվել ԲՈՒՀ-ում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ», [http://www.rferl.org/content/Armenian\\_Photojournalist Severely Beaten In University Dispute/1509708.html](http://www.rferl.org/content/Armenian_Photojournalist Severely Beaten In University Dispute/1509708.html) (կայքի վերջին մուտքը՝ 20/05/2009),

Յրաձգային և փոքր տրամաչափի գենքերի հսկողության Յարավ-Արևելյան Եվրոպայի կենտրոն (SEESAC), (2005 թ օգոստոս), «ՀՓՏԶ-ները և անվտանգության մասնավոր ընկերությունները Յարավ-Արևելյան Եվրոպայում. Անվտանգության բացակայության պատճառներ թե՝ հետևանքներ», [http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW\\_and\\_PSCs.pdf](http://www.saferworld.org.uk/images/pubdocs/SALW_and_PSCs.pdf) (կայքի վերջին մուտքը՝ 10/07/2009),

Սթեննինգ, Ֆիլիպ Ս. (2000 թ սեպտեմբեր), «Մասնավոր ոստիկանության լիազորությունները և հաշվետվողականությունը», Քրեական քաղաքականության և հետազոտությունների Եվրոպական համես, 8 (3), 325-352,

Յունիջար, Ելենա և Մարկո Միլոշեվիչ, Պրեդրագ Պետրովիչ, Սինյա Սոոյյանովիչ, (2008), «Անվտանգության մասնավոր ընկերությունները Սերբիայում. բարեկամ թե՝ թշնամի», Քաղաքացիական-ռազմական հարաբերությունների կենտրոն, [http://www.ccmr-bg.org/upload/document/0810211610\\_private\\_security\\_co.pdf](http://www.ccmr-bg.org/upload/document/0810211610_private_security_co.pdf). (կայքի վերջին մուտքը՝ 26/9/2009),

Զեղմներ, Լյուչիա, (2006) «Հեղիեղուկ անվտանգություն. շուկայի կառավարում հանցագործությունների հսկողության նպատակով», Քրեաբանություն և քրեական արդարադատություն, 6(3), 267-288